

ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻՈՅ ՆՈՐԱԳԻՒՏ ԹՂԹԻ Մ'ԱՌԹԻԻ

«ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԹԵՐԹԻՆ ԵՒ «ԲԱԶՄԱՎԻՊԻ» ՀԱՅԵԱՑԲԸ

ՄԻ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻ ՆԿԱՏՄԱՐԲ



ԱՐԱՐԱՏԻ Ապրիլ ամսաթււոյն մէջ, կարդացինք Վ. Վ. ստորագրութեամբ մի ընդարձակ յօդուած, որուն խորագիրն է. Բնութեան խնդրի նկատմամբ մեր և Միսիսիսիան հայրերի ունեցած հայեացքը: Այս յօդուածիս գրութեան իբրև զխաւոր շարժառիթ եղած կը յիշուի « Բազմավիպի » Մարտ ամսատետրին մէջ Ն. Քարամանցին տրուած պատասխանն, որուն հեղինակն ստիպուած էր յակամայիցս ընել և մի քանի ճիշդ դիտողութիւններ Էյմիածնի դաւանարանութեան մասին: Սակայն մենք կարող ենք ամենայն վստահութեամբ հաստատել, թէ « Բազմավիպի » այդ յօդուածէն տարիներ յառաջ իսկ « Արարատ » իրեն կէտ նպատակի դրած էր արդէն յարձակողական կերպով կրօնական խնդիրներ յուզել, հակամիտութեան հոսանք մի յառաջ բերելու համար, և ասոր յայտնի ապացոյց են Տէր Միքէլեանի, Կոստանանի և այլոց յօդուածներն, յորս կատարեալ յեղաշրջութիւնք սկսան տեսնուիլ ոչ միայն գաղափարաց, այլ և պատմական յիշատակարանաց. և Կոստ. կաթողիկոսին ընծայուած անոն և անվաւեր գրութիւններ՝ իբրև վաւերական ներկայացան, և մինչև այն ժամանակ իբրև երկարացակ ճանչցուած և անարգուած Եղբայր, Օձնեցիներ և Լամբրոնացիներ իսկ՝ իբրև մի բնութեան պաշտպաններ յասպարէզ հանուեցան: Այո՛, « Արարատի » այս ուղղութեան պարայառաշներն

են ոչ եթէ կրօնականներ, զորս կ'եպերէր « Մշակ » վերջին օրերս, այլ նոյն իսկ Գերմանիա ուսած և Էյմիածնարնակ, — ներուի ինձ ըսել, — շահագէտ աշխարհիկ պարոնայք, զորս իբր ազատ և լայն հայեացքի տէր մարդիկ կը յայտարարէր նոյն թերթը: « Բազմավիպի » սկզբունքով կրօնական վիճարանութիւններ երբէք յուզած չէ, և յուզուած խնդիրներու մէջ իսկ բնաւ նախարձակ լինել անորժած չէ: Այս ոչ եթէ իբրև ապիկար՝ ճշմարտութենէ փախուտ տալու համար, ոչ բնաւ. այլ գիտնալով քաջ, որ մեր ազգը տակաւին այն վիճակին հասած չէ, որպէս զի կարենայ այնպիսի խնդրոց ճշդութիւնը կամ անճշդութիւնը լուրջ և անաչառ կերպով ուսումնասիրել և հասկանալ: Այս նպատակաւ և այսպիսի ժաւանակի մէջ՝ յիսուսաւանդ սիրոյ և միաբանութեան յօդն ևս պահելու համար, զոր աւանդեցին մեզ մեր երանաշնորհ թարգմանիչ և Շնորհալիներ, բարեկամական ազգարարութիւններ ևս եղան մեր կողմէն. սակայն փոխադարձ արդիւնքն ոչ այլ ինչ եղան մինչև ցայսօր, բայց եթէ ցաւակցութիւններ և խոստումներ ի պարտուպատշաճ զգուշութիւն, այլ ոչ բնաւ արմատական զգուշութիւնք: Ասկէջ իսկ ակներև կը տեսնուի, թէ յիշեալ գործիչներու ազդեցութիւնն աւելի մեծ է այսօր վարդապետաց վրայ: Նոքա, այսինքն է « Արարատի » գործիչներն, երևի թէ որոշած են շարունակել իրենց ընտած

*

ուղղութիւնն, և մինչև անգամ խաւարը՝ լոյս, և սեւը՝ ճերմակ ներկայացնել իրենց ընթերցողներուն, եթէ կարելի լինի: Կ. վարդապետ՝ մին այդ գործիչներէն, իւր յիշեալ յօդուածին մէջ մի քանի ժանգոտած գէնքեր գտնելով. ի թիւս որոց և Յովհ. Օձնեցու անուամբ ի վերջ կոչաւ «Արարատի» հրատարակած նորագիտ գրութիւնը, լի վրստահութեամբ ջատագով կը հանդիսանայ մի քննարկած վարդապետութեան՝ Հայաստանեայց եկեղեցւոյ, և իբրև ախոյեան՝ կը հրաւիրէ «գիւղմամլէպն» պատասխանելու իրեն:

Մենք այսպիսի հրաւերը մի սիրով կ'ընդունինք, այնու մանաւանդ՝ որ խնդրը բոլորովին ուսումնական է, և մեր գասական սուրբ Հայր և Հօտապետաց գրուածքն և մաքերն ուղիղ հասկնալու նպատակաւ: Բայց թէ արդեօք իրենց կողմանէ ևս հասկընալու և համոզուելու ժամն հնչած է. այս քանին տարակուսելու բաւական պատճառներ կան առնթեր. սակայն և այնպէս պաւտարանապետութեան հետ՝ մեղքն ևս հրաւիրոյն վիզը:

* *

Յօդուածագիրն Կ. Վ. Քարամանցի կողմէն Մխիթարեաններու վրայ ի զուր տեղացած զրպարտութիւններն հայտարար հոգւով լրելու համար կ'ըսէ. «Մենք չենք մտածում ամենեւին, թէ նոքա գիտակցաբար պատմական յիշատակարաններ կեղծելով են այդ արեւ (այսինքն է Հայաստանեայց եկեղեցւոյ մասին Եւրոպացւոց միաբնակութեան կամ երկաթնակութեան դադափարներ տուել), այլ ընդհակառակն համոզուած ենք և Վենետիկի հարց մատենադարանում ունեցած մի քանի օրուայ փորձով վկայել կարող ենք, որ նոքա այս կէտում առ հասարակ բարեխիղճ և հաւատարմ են գտնուել: Սակայն մենք զիտենք, թէ ինչ ստել է կաթոլիկ լինելը, դատարակուել այն ոգւով, որ ընդունակ է դարձնում մարդոց սեւ՝ սպիտակ տեսնելու, և մեզ արգահատանք է պատճառում Հաջողուն ալ՝ անդուտ անկեղծ հառաչը, թէ «Գրիգորի Աստուածը դարեւն ի վեր թողեր է զվեց երեսն», և այլն: Ահա այս ոգւով է որ պատուարած յօդուածագիրը հարկ է տեսնում «Հայաստանայց եկեղեցին որոշել ի հիւն և ի նոր. հենով իմանալով մեր բոլոր Հայրքը լռաառնելէն մինչև ի ժողովմ ֆաղիքոսն և նոցա յաշորդները, որք ընդհանուր եկեղեցոյ և հասարակ միութեան սիրել և պաշտպանել են... իսկ նորով՝ յետ ժողովոյն Քաղկե-

դոնի դայթ ի դայթի գնացող մասը մինչև ցայտօր: Մեր բողոքը նոյն իսկ այդ անհիմն տեսութիւնից յառաջ եկած մոլորութեան դէմ է»:

— Դնորհակալ ենք ձեզ, պատուարածան յօդուածագիր, որ ձեր մի քանի օրուայ փորձաութեամբ դուք կարող եղած էք Քարամանցներու թիւր կարծեաց հակառակ ուղիղ համոզումն կազմել, թէ Մխիթարեանք քաղկեդոն և հաստատարիմ աւանդապաւններ և ներկայացուցիչներ եղած են միշտ մեր նախնեաց յիշատակարաններուն. սակայն այդպիսի բարեխիղճ և հաւատարիմ աւանդապաւններն՝ ինչպէս կրնան սեւ՝ սպիտակ տեսնել: Այս երկու նախադասութիւններն իրարու այնքան հակառակ են՝ որքան ձեր լեզուն և դիտաւորութիւնը: Կաթոլիկեայ ըլլալ եթէ բաւական և բանաւոր պատճառ մ'էր սեւ սպիտակ տեսնելու, նոյնը անհաւատարիմ պիտի ընէր Մխիթարանները նաև իրենց նախնեաց յիշատակարանները փոփոխելու. բայց որովհետև այս դուք իսկ կը վկայէք, թէ զուր զրպարտութիւն է. որովհետև ի քննարկ ձերմէ, — բայց տէրունեան առաւօրն, — դատեցայց զձեզ: Եթէ կաթոլիկեայն ընդունակ է սեւ՝ սպիտակ տեսնելու, ինչով կ'ապացուանէք, թէ ոչ կաթոլիկեայք ալ ընդհակառակն սպիտակ՝ սև տեսնելու ընդունակ չեն: Այս տխուր ճամբատութիւնս, որ աւաղիններու նկատմամբ դեռ ապացուցի կարօտ է, վերջիններուն համար՝ բազմիցս ապացուցուած և մի ընդհանուր իրողութիւն կարելի է համարել դժբաղդօրէն: Միթէ այն անթիւ անհատնում գրական գողութիւններն և ստալօգ յօդուածներն իսկ, որք ամէն օր մամուլի ձեռքով հրապարակ կ'ելնեն և կը խայտառակուին, էմիթնակաւ անհատներու հարազատ զրի ծնունդ չեն: Այո՛, մենք մի քանի տասնեակ յիշատակարաններ ևս կը ճանչնանք է. դարէն և այսր ծանօթ և անանուծ գրիչներու, որոնք՝ օղաց ձեռքով և աչքի գարնող կերպով խանդաբարձ են և հակասական դարձած: Այդ յիշատակարաններն մին ևս անտակարայն ձեր Օձնեցւոյ անուամբ հրատարակած և վաւերական կարծուած ճառն է, ինչպէս Ժողովոց պատմութիւնն, որոնց վերայ մենք կ'ուզեմք մի քիչ կանգ առնուլ այս տեղ, ցուցնելու համար, թէ անընտրողաբար ինչպիսի յիշատակարաններու վրայ յեցած էք դուք. և թէ՛ որքան խախտու են ձեր հիմունքը, որոց վրայ օգու յին աշտարակներ բարձրացուցեր էք:

* *

— Կ. Վ. « Այս ճառի¹ հակադրողներու կան լինելու մասին արդէն կարծեմ միութարեան հայրերը ոչ մի կասկած ունէր է չունենան. բայց զուցէ նոքա սորա վաւերաւ կանուծիւնը կասկածելի կը համարին, ինչպէս յաճախ անվաւեր ու աղաւաղ են համարել և չեն հրապարակել շատ այդպիսի գրութիւններ, որոնց մէջ Քաղկեդոնի մասին խօսք կայ, և որ մենք հետզհետէ հրատարակել կ'աշխատենք, նոցա արժէքը ցոյց տալով » :

— Այդ ճառին, ինչպէս և անոր հակադրողներուական ըլլալու պարագաները խիստ նոր են և կասկածելի. Կ. Վ. պէս հայկաբան աստուածաբաններ միայնկարող են Յովհ. Օձնեցւոյ ընդդէմ Երևանքականաց ճառին և ասոր մէջ խօսող Հեղինակները մի և նոյն անձը համարել, իսկ Մխիթարեաններն՝ ընդհակառակին իրենց համեստ գիտութեամբն բոլորովին տարբեր ժամանակի, տարբեր հոգւոյ և գրի արտագրութիւններ կը ճանչնան զանոնք. Եւ քանի անգամ տեսնեն Մխիթարեաններն, որ այս և այսպիսի անվաւեր գրութեան մեր քաջածանօթ և վաւերական Հարց անուան ներքև հրապարակ կը հանուին, առանց զննութեան, իրենց նուիրական պարտքն է այդպիսի կեղծ գրութեանց դիմակը վար առնուլ և խայտառակել. որպէս զի տգիտաբար ոսկին՝ կապարի և սըտութիւնը՝ ճշմարտութեան տեղ չի վաճառուի, նոր պարկանութեան հրապարակին վրայ: Տեսնենք փաստերը, զորս դուք չէք ուզած տեսնել » :

Ա. Օձնեցւոյ ընդդէմ Երևանքականաց ճառին մէջ մենք կը կարդանք բազմիցս հետեւեալ բացորոշ բացատրութիւնները. Եջ 52 « Առ երկուսն հաւասարապէս ունի երանութեան բան, երկախումբ խոստովանեալ (գրքիստոս) ըստ բնութեանցն, և մի ըստ միաւորութեան: Մի՛ զմին ասելով՝ զբնութեանցն յսցանք կամակործնցող զաղբիւրս. և մի՛ յասելոյ անտի գերկախումբն՝ պատու ունի կամելով զմիաւորութեան պատմունան, այլ բարեպաշտաբար առ երկուսն զայ գիտացեալ, միութեամբն ճանաչել զբնութիւնն, և ի բնութեանց անտի ելանել առ միութիւն... Փախչիս ի բնութեանդ անուանէ՛ ընդ նմին և յերկացդ ասելոյ. և ո՛չ գիտես, թէ մարմին ասելով յերկոսին ի ներքա ըմբռնիս՝ յա-

րոց փաշիտ: Զմարմինն՝ մարմին Բանին ասելով, և զԲանն ասացեալ մարմին ունել, զԲնչ այլ ինչ թուիցիս ասել, եթէ ոչ կրկին... Իսկ եթէ՛ զմի և զնոյն Քրիստոս՝ յերկուց խոստովանիս ասել ընտելեանց, այսինքն աստուածային և մարդկային, ընդդէմ զարհուրիս և զայրանաս... — Եջ 54. « Եթէ յերկուց ըստ ընտելեան ոչ կարնի ասել զմին կարի յոյժ չարաշար ըստ բնութեան՝ զմին զտանին ասացեալ բնութիւն... — Որ է ըստ ընտելեան յերկուց, իսկ ըստ միաւորութեան մի » : — Եջ 55. « Եւ որ երկուսն ասէ բնութիւն, զաստուածայինն ասէ և զմարդկայինն. զու գով ոք ի նոցանէ անհո՛ գովոյ ասելով » : — Եջ 57. « Զի այսպէս յերկուց ընտելեանց խոստովանելով, նշանակեցես զնա մարդ միանգամայն և Աստուած. իսկ մին ըստ բնութեան ասացեալ, որպէս ասէք իսկ, բացարձակ անշուամբ և եր նշանակեալ լինի... Այսորիկ ազգաւ անպատկառացոյց սուրբ Հարքն՝ երկուց բնութեանց Քրիստոսի՝ աստուածայնի և մարդկայնոյն լեաք, բնութիւնը երկու ասելով. վասն զի Աստուած և մարդ, — և եթէ իմասին եկին բնութիւնք. — և եթէ Հաւաստի վերկոսին ունէր ընտելեանն Քրիստոս... Ոչ եթէ զյերկուցն ասելով՝ հրաւարէին ասել զմին, և կամ եթէ զսորին հակառակն զմին խոստովանելով՝ յամառէին յերկոցուցն զայ խոստովանութիւն, այլ համարակարար երկոցուքս այստիպէ բարեփառութեան զամբարօք փայլեալք պայծառանային, երկուս ըստ բնութեան, և մի ըստ միաւորութեան գրքիստոս քարոզելով » :

Արդ՝ ձեր հրատարակած ճառին մէջ ընդհակառակն այս բացատրութիւններէն և ոչ մին կը գտնենք մենք. դուք եթէ զտած էք ցոյց տուէք մեզ: Իսկ եթէ փոխանակ երկուց՝ միշտ մի բնութիւն կը վարդապետէ, ինչպէս կրնայ ուրեմն զոցա հեղինակն մի և նոյն ըլլալ: Դարձեալ, ուր Օձնեցին մին ըսելով՝ « Քրիստոս կը հասկնայ կամ անձ, նաւորական միաւորութիւնը, անձանթն ընդհակառակն գրութիւնը և կամ զՔրիստոս ըստ բնութեան, և ոչ թէ ըստ միաւորութեան, որ բոլորովին հակառակն է առաջնոյն: Յոյց տալու համար թէ Օձնեցւոյ գրութիւնը կամակորոշ կամ լաւ ևս խանգարողն՝ որչափ հեռի է անոր ըրած պայծառ վարդապետութենէն, բաւական է ուշ դարձնել « Արաբատ » 195 իջի երկրորդ սեան « Եւ արդ հարցեալ զմեր ժողովարանն Քաղկեդոնի » տողերէն՝ մինչև Բ. պարբերութեան « անհրաւար է ասպա ի միում՝ գիմի երկուց բնութեանց զոյանալ » տողերուն, զորս իբրև սեւա մաղձ քողով ևս ծածկել և անհասկնալի ը-

1. Այսինքն է « Արարատի » Ապրիլ ամսատետրին մէջ տպուածին :

նել խանացեր է: Այսպէս է նաև երես 195, «Արդ՝ արգելք է միում գլխի բնութիւնն և տարրկային գրնութիւն (sic) զի մի մասնեացի ի խաչին», և այլն: Օձնեցոյն և Հարց ուղիղ վարդապետութեան հակառակ է դարձեալ, յէջ 194, մէկ բացատրութիւնն, ուր կ'ըսուի մարդկային բնութեան համար, թէ «յեղալիութեալ» աստուածացաւ:

Բ. Ապաց. Օձնեցոյ ոճն և լեզուն այնքան կը տարբերին անծանօթի լեզուէն և ոճէն, որքան երկինք՝ յերկրէ: Ով կը տարակուսի՝ թող բաղդատէ գանոնը իրարու հետ և ըսածս ճիշդ պիտի գտնէ: Իսկ ես ի սէր հասառստութեան մէջ կը բերեմ հետեւեալ բառերը միայն, որոնցմէ և ոչ մին կը գտնուի Օձնեցոյն ճառերուն մէջ. մանաւանդ թէ Օձնեցոյն շատ դարեր վերջ հազիւ կրնան գործածուած ըլլալ, և այն ըստ քմաց յերիւրեալ՝ Օրի. աղ. ստորաքննելով, գալյառն, վերաշտանելի, ժողկանեանայ, զմահորանն, յարասկացոյց, յարեարար, վայրագարկեցան, ախտածեսն, գրեմխոս, վերապայծառ, զոգասձանապարհ, տարատարիան, դառան, որոճողն, թերորդատիկ, բիւնարեան, յարաբարելով, և այլն:

Այս բառերէս երեքը միայն գործածուած կը գտնենք Ժ. դարու մատենագրաց քով, այսինքն են զոգասանապարհ առ Գ. Նաւրեկացոյ, գառան և յարաբարելով Յովհ. կաթ. քով. իսկ միւսներն կարգադրածուած չեն մեր նախնեաց քով, կամ գէթ յիշուած չեն Հայկզ. քառարանի մէջ: Ուստի Ժ. Դ. դարուն ի գործ ածուած կ'երևին: Ուրեմն հետևութիւնն յայտնի է:

Գ. Եթէ այդ ճառն ստուգուի հաւատոյ դաւանութիւն մ'երած ըլլար Յովհ. Օձնեցոյ, ապաք է որ պաշտօնապէս և ձեռնագրով ուղղուած ըլլար առ համօրէն եկեղեցին Հայաստանեայց, և կամ առ յոյնս, և կամ առ հայրապետ ոմն: Սակայն մենք ոչ միայն այդպիսի պաշտօնական պատճէն չենք գտնիր այս անգ, այլ մանաւանդ իրարու խիտ հակասական և տարտամ պարագայներ: Եթէ 192 կը ծանուցանէ, թէ այդ ճառը կը գրէ առաջին երեք տիեզ. ժողովները չընդունող Նեստորոս, կանաց գէմ, որոնք և ոչ իսկ զիստելեայն Փրիստոս՝ Տէր և որդի Աստուծոյ կ'ընդունեն, այլ իբրև մարդ, տալով անոր երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւններ: Իսկ 193 ի՞նչ ընդհակառակն իբրև Ներութեան կաններ և Ապողինարիոսեան կը յանդիմանէ գանոնը, ըսելով. «Որք ի բանն ապիբատոս ախտածեսն թէ աստուածային բնութիւնն առանձնակի թիլատեցաւ, և կամ անկատար երբեք ի կատարելութիւնէ եղև, և կամ ի խա-

չին բեւեռեան ոչ էր մարմին Բանին, այլ նոյն ինքն Արարիլ բնութեան»: Եթէ 195 դարձեալ իբրև ժողովարանին Քաղկեդոնի և Լևոնի՝ խօսքը կը չըլլէ անոնց վրայ, ըսելով, թէ «ի միում գլխի՝ երկու բնութիւն ասեն ասպակիլ և խաչիլ... Եւ դարձեալ նոյն իսկ զԱստուած պարտին ասել խաչեալ վանն աշխարհի, այլ մարդ սոսկ»: Արդ՝ այս և ա. սոր. նման զեռ ուրիշ իրարու անյարիր տեղեր, հակասական աստութիւններ, որ կը վերաշտան այս ճառիս մէջ, ինչպէս Յակոբայ խայտախարի այծերն՝ Լարանու միադոյն հօտին մէջ, յայտնապէս ցոյց կու տան մեզ, թէ այդ անանծօթն Օձնեցի իմաստասէրը չէ և չկարէ լինել, այլ մին այն կամակոր վարդապետներէն, որոց համար կ'ըսէ ինքն իսկ ներածութեան մէջ, «սակարար, թէ «Չթանձր մօրուս յառաջ ձգեն, որ յաղաթողնս պերճացեալ պահուին, և բարձրասոյն պարծին... զյեղեղումն մտաց զինչկա մութեան ի գործ արկեալ», ուրիշ բանի համար չէ, բայց եթէ խանգարելու մեր երանաշնորհ նախնեաց գրուածներն և ուղիղ վարդապետութիւնը՝ իրենց քմահաճ կարծեաց համաձայն:

Այսպիսի մի եղելութեան յայտնի ապացոյցը կը գտնենք ստուգուի ճառիս վերջաբանին մէջ, ուր կ'ըսուի առ համախոսն իւր, առանց ուրուք անուանակոչութեան. «Ասպէս և ես զայս սակաւուք ինչ ձեզ հարկեցայ գրել, զի մի լուծեամբ տրտմեցուցից զձեզ... և եթէ գիր (գիր) բանին տգիտաբար ինչ լսելեաց ձերոց ծեփքից, զհասարակաց մարմնոյս բնութեան տկարութիւն և զտգիտութիւն ծանոցեալ շնորհեցէ մեզ: Եւ թէպէս և իմն ըստերիս իմացումնք, այլ հաւատամ ոչ միտել կամ թիւրել սըրտից ձերոց, որ էր իսկ հաստատունն փանք եկեղեցոյ... յանդիման կացոցանք զատուան առդոյն»: Արդ՝ այնքան աւելի խորհրդաւոր է այս վերաբան, որքան զի անոնց, առ որս ուղղեալ է, պատմէր կամ ըմբոյսակեան կը պակաս, և այդ պակասութիւնն աւելի ևս կը պօքեցէ քննարկատուութեան գաղտնիքը:

Գ. «Արարատի» 163 ի՞նչով տրուած տեղեկութեան համաձայն այդ ճառը կը գրուի նուի Էլմիստնի գրասանն երկու գրագրաց մէջ, որոնք Սիմեոն կաթողիկոսի օրերը գրուած են, այն է մօտ Փրիստոսի 1767 թուականին: Եւ թէ «նոցա քովանդակութեան հիմնական մասը կապմուն և թորոց գիրքը»: Փակագծերի մէջ առնուած խօսքերը շատ մութ են և երկդիմի, այսինքն է կը հակցուի նախ, թէ թորոց գիրք կոչուած ժողովածուէն ընդօրինակուած են այդ գրք-

չազրերն, և կամ, թէ Թղթոց գրքի մէջ Յովհ. Օձնեցւոյ ընծայուած մի ճառն, որուն վերայ ձեռնած և կազմակերպուած է յիշեալ ճառը: Արդ՝ այս երկու պարագայներս մենք ի նկատի առնելով, կրնանք ըսել, թէ Յովհ. իմաստասիրի անուամբ «Արարատի» մէջ հրատարակուած այդ ճառն հաւանօրէն 1767 թուականէն յառաջ երբէք գոյութիւն ունեցած չէ: Պատճառը խիստ յայտնի և եզրակացուցիչ է. որովհետեւ Թղթոց գրքի հնագոյն օրինակն, որ գրուած է ի թու. հ. 2109 = 1299 ի Հոտմկայ, և զեւ 1851ին կը գտնուէր ի Հոովմ Անտոնեան Հարց մատենադարանին մէջ, չունի իմաստասիրի ընծայուած այն ճառը. այլ մի ուրիշ ճառ՝ մի և նոյն նիւթի վրայ, բայց տարբեր պարագաներով: Ուրեմն այդ կը նշանակէ, թէ և ոչ մի այլ հին Թղթոց գրքի մէջ կարող էր գտնուիլ յիշեալ ճառը՝ 1767 թուականէն յառաջ: Եւ հետեւաբար անհարազատ գրուածք մ'է: Ճառիս անհարազատութեան մի ուրիշ ապացոյց է ի վերջ նորին գրուած Յիշատակարանն, որուն մէջ կ'ընտել տրամաբար, թէ «Չայս քոչորս սուրբն Ներսէս Լամբրոնացի եպիսկոպոս տառնալ եղև ի Կ. Պոլս հրամանաւ Գր. Կաթողիկոսի և Լեւոն արքայի»: Լամբրոնացւոյ յամին 1197 ի Կ. Պոլս երթալն պատմաբանօրէն ճշիշ է, բայց թէ այդ թուովը տարաւ իւր հետ իրրեւ վաճան, և անով ցուցուց Հայոց ուղղափառութիւնը, այդ կատարեալ կեղծիք և եթէ է, յիշեալ ճառը հին և վաւերական երեցնելու համար, և ոչ այլ ինչ:

Իսկ այն հարցին, թէ ո՞վ է այդ կեղծ ճառի յերիւրոյն, կարելի է պատասխանել՝ թէ հաւանօրէն Սիմէոն Կաթողիկոսն եղած ըլլալու է, որուն՝ իրրեւ կատարեալ Հաղթատացի վարդապետի խոշորակն էր Յովհ. Օձնեցին՝ իւր Ընդդիմ Երեւոյսկանաց ճառի վարդապետութեամբը. հետեւաբար նա այդ մեծ հեղինակութիւնը, որուն հետեւեցան խոսքով, Ներսէսն և Գր. Տղայ իրրեւ գերազոյն վարդապետի ընդդէմ Հաղթատացոց, հակաբաղկեդոնեան ցուցնելու համար, պէտք է, որ այլայլէր այդ ճառը, խմբագրելով վերջոյն իւր տեսութեանը համաձայն, և նոյն հայրապետին անուանը վերագրէր: Այս կարծիքս մեզ այնքան աւելի վստահութիւն կը ներշնչէ, երբ կը տեսնենք, որ այդ կաթողիկոսը չէ խղճած մեծամեծ փոփոխութեանք ենթարկել նաև տօնացոյցը, միաբարձր, Ժամակարգութիւնն և ճաշոցն օրնգամ, գանձը տպագրած Ժամանակ: Բաւական է բաղդատել աւոր օրով հրատարակուած եկեղեցական մատենները՝ հին ձեռագրաց հետ՝ փոփոխու-

թիւններն իմանալու համար: Այս ճառիս մասին այսքան առ այժմ:

Իսկ զառիվ միւս գրուածքին, որ խորագրուած է՝ Թովհ. իմաստասիրի Հայոց կաթողիկոսի՝ սակս ժողովոց որդ եղեն ի Հայք, կ'ըսենք, թէ արդէն վերջերս ի Վենետիկ հրատարակուած երկասիրութեան՝ մի մէջ շօշափելի փաստերով ապացուցուած է, որ իմաստասիրի հարազատ գործ չէ այդ, այլ երեքէն չորս տարբեր աղբիւրներէ օժանդակուած մի շինծու բան: Մենք աւելորդ կը համարինք կոչել այս տեղ բոլոր այն փաստերը, Կ. Վ. կարող է իջմիածնում իսկ կարողալ յիշեալ հրատարակութիւնը, որուն հետ սակայն, կարծէք, թէ ծանօթացած ըլլալու է. վասն զի ինքն իսկ երկայտութեամբ կոչած է այն կեղծ գրութիւնն ի պաշտպանութիւն իւր գատին: Սակայն Թող համոզուին մեր ընդդիմաբաններն, որ այդ կեղծ յիշատակարանաց վրայ հաստատուած իրենց ձեռնարկութիւններն ևս գիտնական արժէքէ զուրկ պիտի մնան հասկացող հրատարակութեան առջև: Թող համոզուին մի անգամ ընդ միշտ Գերմանիայէն վերադարձող ուսանողներ, թէ այսպիսի այլանդակուած գրուածներ, զորս իրենք ամէն անգամ իբրեւ նորութիւններ կ'ողջունեն և ձայնիս փող կը հռչակեն, Մխիթարեաններն արդէն ի վարդաց բաղդատութեամբ իմացած են նոցա Խնէ և ինչպիսի ըլլալն. և ոչ եթէ անոնց հրատարակման, այլ հրատարակութեան կերպին և հանած շառաչին կը զօժկամակին:

* *

— Կ. Վ. Արդի խիստ քննադատութիւնը կարող է շնանալել այս գրութիւններս իրրեւ իմաստասիրի հարազատ երկասիրութիւններ. կարող է գտնել նրանց մէջ նոյն իսկ Յովհ. Օձնեցւոյ անհամաձայն տեսութիւններ և ձկնողներն. «սակեմք և այնպէս իրողութիւնն այն է, որ մենք ուղղադասական Հայերս, Հայաստանեայց եկեղեցւոյ ինչպէս և նորա վարդապետութեան հին և նոր բաժանումը մրտացածին կը համարինք»:

— Միթէ ամեն ասաց և եղեն իրողութիւն համարելի է, մանաւանդ երբ դառաւոր նախապաշարմանց գիշերն ևս թանձր կերպով ծանրացեր է մտքերու վրայ: Մենք ընդհակառակն կը պնդենք և կը ցուցնենք օրուան լուսով, թէ Հայաստանեայց եկեղեցին

1. Քննադատութիւն Յովհ. Մանուկեանի և Խորհրդարանի վրայ. Վենետիկ 1895. Երես 176-178:

որոշել, — գէթ ըստ դաւանութեան, — ի հին և ի նոր, այնքան յայտնի ճշմարտութիւն է, որքան ճշմարիտ են Հոռոմոց հետ երեք դար, այն է Ս. Լուսաւորչէն մինչև Քաղկեդոնի ժողովը, շարունակ ունեցած սերտ և սիրային յարաբերութիւններն, և ապա այդպիսի յարաբերութեանց խղումը և փոխադարձ աւտելութիւններն: Ով կարգացեր է մեր մասնագիրները ծայրալիք պարապմամբ և զանոնք ուսումնասիրած, նա տարակոյս հանել իսկ կարող չէ, թող թէ ուրանալ այդպիսի մի ակնյայտնի ճշմարտութիւն: Իսկ ով տա կաւին կարդացած չէ զանոնք և ուսումնասիրած, ի հարկէ պէտք է, որ Կ. Վի. պէս լոկ ինքնախար բողոքներով և մտացանքին են թաղրութիւններով մի համարի Հայաստանեայց Ե. դարու Հայերն և անոնց հետնւորներն՝ Աշտարակեցու և Արաշամ կաթողի կոնսերու օրով նոր կազմակերպուած եկեղեցւոյ և անոնց հետևողաց հետ. նոյն համարել, և այն ԺԵ դարերու երկայն և խռովայող ընթացքով: Սակայն մենք հետևեալ դասաւորութեամբ՝ մի կողմն կ'առնունք, առանց բացառութեան, բոլոր Ե. դարու մեր պապական և անտիպ մատենագիրներն, դոցա վրայ աւելացնելով թէոդոր Քոթեմաւոր, Մաթուարայ, Սողոմոն Մաքենցաց պանուհայր, Ան. Երիսկացի, Յովհ. Օձնեցի, Խորովիկի Թարգմանիչ, Մերութ Երէց, Սեբէս, Ստեփանոս և Մովսէս Սիւնեցիք, Խոսրով մեծ, Գր. Եսրեկացի, Չաքարիա կաթողիկոս, Գր. Մազիսարու, Գր. Վկայասէր, Ն. Ենոթկալի, և Ն. Լամբրոնացի, Դրազարկեցի, Սկեռացիները, Գր. Տղայ, Կոստանդին Աթ. Գազիկ, Չաք. եպսկ. Արտագու, Մաթ. Ուռնայեցի և այլք. իսկ միւս կողմը Ն. Աշտարակեցի, Յովհ. Մայրապետի, Վրթաւնէս Գերթով, Արաշամ կաթողիկոս, Ուրտանէս, Ստ. Ասողիկ, Յովհ. Կաթողիկոս, Ուրտանեցի, Ստ. Սրբէլեան, Կիրակոս, Գր. Տաթևացի, Հաղբատացիք և Սանահնեցիք: Արդ՝ այս երկու խմբի մատուցադրաց թով յայտնապէս կը տեսնուին իրարմէ բոլորովին տարբեր ոգիներ, տարբեր դաւանաբանական վարդապետութիւններ, տարբեր մտաւորական մշակութիւններ, տարբեր քաղաքային և կրօնական ուղղութիւններ: Միով բանի՝ այդ երկու խմբի մատենագրաց մէջ կը տեսնուի այնպիսի ահագին վիճ մը, որ Կ. վարդապետի կապած մագէ կամրջով երբեք չեն կրնար իրարու հետ միանալ, առանց զիրար եղծանելու: Այս երկու բնորոշ յատկութիւն ունեցող ներկայացուցչաց համաձայն՝ անոնց պատկանող կուսակցութիւններն ևս՝ միաժամանակ և իրարու տարբեր ուղղութեամբ շա-

րունակուելու են միշտ: Այս ինքն է, առաջնոց նշանաբանն է սէր և խաղաղութիւն. իսկ վերջնոց՝ ատելութիւն և թշնամութիւն: Յիւրաք, Վրթաւնէս Գերթովի և Արաշամ կաթողիկոսի օրով գրուած թղթերէն սկսեալ, բոլորն ևս գրուի են սատուածաբանական ապացուցութենէ. բոլորն ևս ուրիշ բան չեն կրկնել, բայց եթէ նրեթապէս մի բնութիւն, հայեղայններով և նշգրիներով լի, առանց ըմբռնելու Քաղկեդոնականաց և Լեւոնի թղթի վարդապետութիւնը. առանց ուշ գնելու անոնց՝ մի անձն, մի Քրիստոս տեսածանելի և անշփոթաբար քարոզելուն: Դա մի պատմական և ամենատարբեր եղելութիւն է, այն քան յայտնի, որ Նէօդէֆէ, Գէլգերի՝, և Քաղկեդիոսի պէս օտար և անկողմնասէր ջրն նադատներն իսկ արդէն ճանչցեր և գրել են. բայց որովհետև Քարապետներու և Կ. վարդապետներու համոզման և քմահաճոյից դժմ է, այն պատճառաւ իսկ անընդունելի: Դայց մեր կարծիքով այդ և ուրիշ օտարերկրեայ գիտնականները շատ աւելի անկողմնապահ և լուրջ կերպով կարդացեր և խորը թափանցել են մեր եկեղեցական հին և նոր կուսակցութեանց երկերուն, քան թէ ազգայնոց շատերը: Այդ ընդհանուր և այնքան աչքի զարկող երևոյթը շտեմել՝ կը նշանակէ աչքկապուել խաղալ՝ Նոյն իսկ Կ. վարդապետ ասկէց երկու տարի յառաջ վերնետուած զըտնուած ժամանակ՝ անկեղծօրէն խոստովանեցաւ, թէ ինքը տակաւին մեր նախնեաց գործերուն հետ ծանոթացած չէ. ինչպէս մի ուրիշ բարեմիտ վարդապետ ալ ըսաւ, որ մենք այդպիսի գրուածներ չենք կարդար: Եւ իւրաք, առայինն՝ ակամայիցս բացուած մի վիճարանութեան մէջ նեղը մտած ժամանակ « Զգիտեմ » ու միշտ իրեն ուղղուած հարցներուն կը պատասխանէր, երբ հակառակ փաստեր չէր գտներ: Այժմ կ'երեւի թէ կարդացեր է նա: Ապացոյցն. ահաւասիկ անոնց մէջ բրած գիտը, միաբնակ և հակաքաղկեդոնականներ հրապարակել բոլոր մեր այն հեղինակներն, յորոց զոման զեռ կէս դար յառաջ իբրեւ երկաբնակ կը նախատեսէ, Ն. Լամբրոնացիէն սկսեալ:

— Կ. Վ. « Սակայն մենք հաստատում ենք, որ Հայաստանեայց եկեղեցին՝ իբրեւ մի անկախելի ամբողջութիւն հապար չորս (հարիւր) տարիներէ ի վեր կոխ մղած է երկաբնակութեան դէմ, և ի լուր արևմտից արդարակեր է միշտ՝ մի բնութիւն, ի նկատի ունենալով

գաղափարները և ոչ բառերը, և սակայն հետո մնալով միաբանադարձինք»¹։

— Ինչո՞վ կը հաստատե՞ք, պատուարժան յոգուածագիր, ձեր այդ ենթադրութիւնները, ինչպէս իբրև մի անքակտելի ամբողջութիւն հազար չորս (հարիւր) տարի անընդհատ կռիւ մըած կը համարիք Հայաստանեայց եկեղեցին երկաբնակութեան դէմ, մինչդեռ բաց ի վերայիշեալ առաջին խմբի մատենագիրներէն, որոց ջով բառ մ'անգամ հակառակ Քաղկեդոնեան ժողովոյն արտասանուած չէ, — նոյնպէս ուրիշ հնագոյն և անտիպ յիշատակարաններէ՝ իսկ գիտեմք, թէ Գրիգորէն մինչև Ն. Աշտարակեցի, սորա յաջորդ Բովհաննէս Փարեղնեացիէն, — ի բաց առեալ Աբրահամ կաթողիկոսը, — մինչև Թովհ. Օձնեցի «առնեմքեան միաբան կացին յեկեղեցիս Հռոմոց»²։ Այսպէս Ներսէսէ, այսպէս Գրիգորէ և ուրիշ կաթողիկոսներ։ Մինչդեռ եթէ ներքոյ դարու վաւերական մի այլ յիշատակարան կ'աւանդէ, թէ Յովսէփ անուանով աւագատական մի, Փեղամայ գաւառէն, Հերակլի կայսերութեան ժամանակ Երուսաղէմ ուխտի գացած էր սրբոց նշխարներ բերելու համար, բայց «մեծաւ տրտմութեամբ գարձակ, կ'ըսէ նա, վասն զի ամենեւեմէ հին հուշանկա ժողովոյն «Քաղկեդոնի»։ Ե. Վ. Բրուկս Անգլիացին The English Hist. Review թերթին մէջ, այս գրութիւն վրայ յօդուած մի հրատարակեց վերջերս, պարզելով անոր ժամանակն և պարագաները, կարող էք կարդալ, եթէ կը տարակուսիք։ Դրանոյ ժողովական եպիսկոպոսաց թղթին մէջ, որոց զուտ էր Թէոդորոս Մարդպետական եպիսկոպոս, կ'ըսուի. «Եւ այժմ բազումք խոստովանողս և ընդունողս ժողովոյն Քաղկեդոնի և տումարին Լիւնի հաղորդեցան յայնչարհէս մերմէ»։ Դարձեալ նոյն իսկ Թովհ. Օձնեցւոյ ընծալուած՝ Սակս ժողովոց որք եղին է՝ Հայս անվաւեր գրութեան մէջ գրուած է. «Զի մի սպրդեալ մուծցի չար աղանդն Հերձաժոյն Քաղկեդոնի, որ սփռեալ տարածեալ էր ընդ բոլոր Հայք»։ Ի՞նչպէս և ի՞նչ փաստերով դուք մոռացութեան կու տայք այն ակնյայտ, նի մեծ ճշմարտութիւնը, թէ Չորրորդ և բոլոր Բուճաց բաժնի միլիոնաւոր Հայք՝ միշտ իրենց կաթողիկոսներով և եպիսկոպոսներով Քաղկեդոնի ժողովոյն հետևող եղած չեն, մինչդեռ նոյն իսկ հակաքաղկեդոնեան մատենագիրք նոյնը կը հաստատեն։ Ի՞նչպէս չտեսութեան կը ցարնէք Ն. Աշտարա-

կեցու և Վրթանէս տեղապահի օրերում կատարուած զօտութիւններն, և Վրաց և Աղւանից և Սիւնեաց բաժանումը Հայաստանեայց կարծեցեալ անքակտելի եկեղեցիէն, որ իբրև պատմական և անուրանալի մի եղբուքին շնչտած են Ստ. Սիւնեցւոյ և Մ. Կաղանկատուացւոյ՝ հետ նաև մեր ուրիշ մատենագիրները։ Ի՞նչպէս չէք տեսներ նոյն այդ դարում մեր եկեղեցւոյ առնելու և տոնացուցի, մաշտոցի և նոյն իսկ Հանգանակի մէջ մտցուած փոփոխութիւններն և յաւելուածները, որոնք ցոյց տրուած են շօշափելի փաստերով Վիեննայում տըպուած Հ. Բ. Գաթրերեանի դեռ երեք տարի յառաջ հրատարակուած երկատրութեան մէջ և այլուր։ Ինչո՞ւ և ի՞նչ հիման վրայ կը քողարկէք Ն. Երնոցի և Եղբի ժամանակ կարեւոր քաղաքում կատարուած ժողովներն և այն մեծ յեղափոխութիւնը, որոց վերջնոյն համար կ'ըսէ, բաց յայլոց, նաև Շառադարաթիւն Հայրապետացւոյ Հայոց գրութեան հեղինակն, թէ «Կոյեալ վկաթողիկոսն Հայոց զԵղբ, և զեպիսկոպոսոսն Հայոց և զԻւխան, և բազում իմաստասէրս Բուճաց, և ամսօրեայ քննութեամբ ընդ միմեանս, ապա հաւանեալ նոցա Եղբ թոյր եպիսկոպոսաւք և իշխանաւք Հայոց միաբանութեամբ զօրոյն Գուճայ նգովիւք չափ ի բաց մերթեն», և այլն։ Իսկ առաջնոյն, այն է Ն. Երնոցի քաղկեդոնականութիւնն ընդանկուն իբրև վկայ հաւատարմի կեցեք է Սեբեոս, թէ և այլք ուղեցին ուրիշ գոյն տալ այն պատմութեան։

Տէր Միլէշեան շացած այս և ուրիշ պատմական եղբուքեանց լուսնին առջև, մտացածին զիւտով մի ուղած է յեղաշրջիլ զանոնք. նորա կարծիքով բոլոր Հայոց և Բուճաց եկեղեցական, — այսպէս նաև տիեզերական ժողովոց պատմութիւններն, Նիկիականէն սկսեալ, — ուրիշ բան չեն, բայց եթէ կայսերաց բռնութեան և քաղաքական ճնշման արգասիք։ Կարծիք մի՞ որուն մէջ եթէ ճշմարիտ կէտ մի կայ, այն է՝ կայսերաց միջամտութիւն. սակայն հիդը ըլլալու է մէկը շտեմնելու համար, թէ նոյն իսկ այդ քաղաքական միջամտութիւնը պահանջողն և ընդունողն էր ժողովրդեան և եպիսկոպոսաց համարալի և բացարձակ կամեցողութիւնն, բարեկարգութիւնը պահպանելու և աղետից առաջն առնելու համար։ Ուստի մեր և արտաքին պատմագրութեան հաւատարմի միշտականարանաց ջով այդպիսի կարծիքներ

1. Շառադարաթիւն Հայրապետացւոյ Հայոց, անտիպ Թապած տակաւին։

2. Տես. Մ. Կաղանկ. Պատմ. Աղանակեց. Գրք Բ. Գլ. Ծ. ապ. Ի Մոսկուա, 1860։

ուրիշ բան չեն ներկայացներ, բայց եթէ անապատի մէջ զօսացած դժնիկի մի շրջունն պատկերը (mirage), Տէր Միգէլեանի հետ՝ միասիններն ևս խաբելու ձկտումով: Կը զարմանանք, որ նախնեաց պատմութիւնը թղթատող և «հաստատուն պատմական փաստեր քրեմոլ» Կ. Վ. աւելի այսպիսի առեւ-րևելք փաստերով պատրած է, և երկրորդ անգամ մ'ալ կ'ուզէ պատրել իւր ընթերցողները:

Այո, պատրանք է ըսել, թէ «Միաբնակ անունը պատմաբանին ընծայել է Եգիպտոսի և Ասորիքի այն արևելեան եկեղեցիներին, որոնք Քաղկեդոնի ժողովի պատահաւ նորա սահմանած դաւանութիւնը հակառակ դառնելով Կիւրդի Աղեքսանդրացու և Եփեսոսի Ս. Ժողովում պաշտպանած ճշմարիտ վարդապետութեան, երկարատեւ վէճերից յետոյ բաժանուել են ընդհանուր եկեղեցուց... Թէև նոցանից ոչ մէկը հետևեալ չէ եղել Եւտիքիսի»: Պատրանք է ըսել, թէ «Հայոց եկեղեցին բոլորովին տարբեր անցեալ է ունեցել, այդպէս կոյուած միաբնական կամ նոթիքական վէճերի մէջ, նա չէ մասնակցել և չէր էլ կարող մասնակցել. որովհետև քաղաքական հանգամանքների շնորհիւ վաղուց արդէն (ըստ մեզի սկզբանէ ևեթ!) բաժնուած ընդհանուր եկեղեցուց, և վարչական տեսակէտից անկախ՝ նա տարբեր կեանքով ապրում և ուրիշ աւելի հետաքրքրական կիսեական խնդիրներով էր գրադոսած»: Պատրանք է, միով բանի, ըսել, թէ մի բռնութիւն դաւանելով, ըստ գաղափարաց և ոչ ըստ բառից, կարելի է մնալ Կիւրեղեան և ոչ միաբնակ:

* *

— Կ. Վ. Ապացուցէք ինձ, թէ դոքա ստուգուի պատրանք են, և ոչ թէ իսկապէս պատմածած պատմական եղելութիւններն:

— Նախ և առաջ պատմաբանին ըսելով՝ եթէ դուք կը հասկանաք Յունաց, Ստրաբոն և անոնց դրացի ազգերու հնագոյն և վաւերական յիշատակարաններն, և ոչ թէ այժմու գերմանական քննադատներէն ոմանք վարդապետներ, նա միաբնակ անունը տուած է, ոչ միայն Եգիպտոսի և Ասորիքի, այլ բոլոր այն կուսակցութիւններու բաժնուած եկեղեցիներուն և եկեղեցականներու, որոնք ոչ միայն Քաղկեդոնի տեղեկական ժողովը իբրեւ ուղղափառական շնորոշեցան, այլ նոյն իսկ իբրեւ յամառ և ջերմ կուսակիցներ Գիորու կորոսի, Պարսամի, Տիմոթէոս Կուզի և Սեւերիանոսի և Յուլիանիտաց, — որոնք իբրեւ

համախոհ և համակարծիք Եւտիքէսի հետ նշովեցան, — շարունակեցին մինչև Բ. դար, և կը շարունակին տակաւին անոնց մորտուութեան մէջ: Այս կէտիս նկատմամբ կարծող-կեայց հետ՝ բողոքականներն, աւետարանականք և բոլոր եկեղեցական մատենագիրներն համաձայն են. բացառութիւնք խիստ քիչ են: Զարմանք է, որ դուք դարերու այդ ընդհանուր ձայնը խղճելով, Հառնակին կամ մի այլ բողոքական ուսուցչի կարծիքը, — որ անտարակոյս ազատ ձկտումների և հայեացքի արդիւնք է աւելի, — կը վերադասէք բոլորին: Բայց այնքան արժէք կարող են ունենալ այդ կամ այդպիսի հեղինակութիւններ Ասորիքի և Եգիպտոսի միաբնակ եկեղեցիներու մասին, որքան Նոյգէկեիկն՝ Հայոց եկեղեցույ դաւանանքի մասին, զոր դուք յարմար չի դատելով՝ կը մերժէք: Գէլգեիկ վալ-յութիւնը Հայոց եկեղեցույ մասին Տէր Միգէլեան մերժելով իբրեւ անճիշդ, նոյն վալ-յութեամբ յանդգներ է ուրիշ տեղ հաւատատել, թէ Հայաշխատանի Նեստորական եկեղեցին՝ Հայոց եկեղեցույն հարազատ քոր եղել է միշտ, առանց նայելու, թէ այդ Նեստորականների նախահայրերն էին, զորս մեր թարգմանիչները իսարանք դուրս աքսորեցին: Նոյն հակասութեան մէջ դուք ինկած էք այժմ, երբ Հայոց եկեղեցին միաբնակութեան ազատ կացուցանելու համար, բուն միաբնակ Ասորիներն ևս Կիւրեղեան կը յայտարարէք: Ի՞նչպէս կրնային այդ եկեղեցիներն Կիւրդի և Եփեսոսի ժողովը լոկ պաշտպանելու համար միաբնակ անուննիլ Քաղկեդոնի Ս. Սիւնհոգոսէն, երբ նոյն իսկ այդ Սիւնհոգոսի Գործերէն մենք գիտեմք, թէ այն եպիսկոպոսներն, որոնք կը դժուարէին դաւանել Եփեսոսի ժողովն և նշովել զՆեստոր և զԵւտիքէս, ազադակաւ իբրեւ աղանդաւորք դուրս կը հանուէին: Այո, այսպէս վարուեցան Հայր ժողովոյն՝ Եգիպտոսի 12 եպիսկոպոսաց հետ, որոց գլուխ էր Հերակլ, այսպէս և այլոց: Իսարձապ, ինչովն կ'ապացուցանէք, թէ այն եկեղեցիներէն ոչ մէկը հետևեալ չէ եղել Եւտիքէսի: Եթէ ունէիք պատմական յիշատակարաններ՝ ինչու մէջ տող չէք բերած. իսկ եթէ չունիք՝ ի՞նչ խղճով միաւնեւորուած աչքերը փոխի կը փչէք հակառակ դարբնու պատմութեան:

Փալով Հայոց եկեղեցույն՝ կարող ենք ընդունիլ, թէ ունեցել է տարբեր անցեալ, այսինքն է աշխարհական պատերազմով զբաղուած էր, երբ 686 հայրապետաց ժողովը կը համախմբուէր Եւտիքէսի քրիստոսեղծի մոլորութեան դէմ, և կը հրաւիրէր նաև Հայոց նուիրակները: Բայց թէ այս ժողովն

վերջ ևս նա միայնակցեմ կամ ետդիքական վէճերուն չէ մասնակցել: այդ ոչ այլ ինչ է, բայց եթէ մի հակապատմական ուրացութիւն, որ ոչ մի կերպով չարդարանար պատմութեան առջև: Յիշուի, ի՞նչ կերպով Դիոնուսիոս և Պարսամ և այլք եղան ձեզ և ձեր նախնի համախոնհերուն այնքան սիրելի և յարգելի, մինչև Շարականներու մէջ ևս մշտան և երգեցուցան ի թիւս Սրբոց՝ Հայրապետաց: Ի՞նչ պատճառաւ նդովուցաւ, և տակաւին կը նդովուի ի ձեռնադրութեան զՆեատոր դատապարտող Քաղկեդոնի ժողովը: Ի՞նչ կը նշանակեն Աշտարակեցւոյ նախաձեռնութեամբ գումարած Դընոյ ժողովը, որ յետոյ առ Եզրիւ նդովեցաւ, այսպէս և Մանազկերտին: Ի՞նչ կը նշանակեն և այնքան բարեկամական կամ թշնամանալից յարաբերութիւններն և կրկին ու կրկին թղթերն որք Բարգէշի, Ներսիսի, Վրթանիսի, Աբուհամիտ և ուրիշ նման կաթողիկոսաց անուամբ ուղղուած են առ Եպիսկոպոսուն Պարսից, Ասորաց, Վրաց, Աղուանից, առ Պետրոս Առդեանդրիւն, առ Տիմոթէոս Կուղ, առ Քիլան որդի Սորմէն Ստրառելատ և Ալգիշոյ, և սուցա փոխադարձ պատասխաններն: Միաբնակուի՞նք դրադիլ եթէ չէ՞ Հայպ ի՞նչ է Պարսից թագաւորներու՝ Կաւառայ և Խոսրովու օրերում եղած ժողովակներուն մասնակցիլն: Միաբնակութեան խնդրոց զբաղուելու յայտնի նշան չի՞նչ Հուսմոց հետ ունեցած այն անդադրում վէճերն, որոցմով լի են վերոյիշեալ հակաքաղկեդոնեան մատնադրաց էջերն, և այն անշիջանելի ատելութիւնն և հայհոյանքներն, զոր յընթաց դարուց տեղացեր են Քաղկեդոնի ժողովոյն դէմ ձեր պաշտօնի Ուխտանէսներն, Տուտեորդիք և նմանիք: Միտք բանիւ՝ ուրիշ ո՞ր կրօնական խնդրոյ վերայ, այնքան ընդերկար և բուռն կերպով խօսեր և գրել են Հայք, ինչպէս մի կամ երկու բնութեան և յարակից խնդրոց, զորս մենք չենք գիտեր, և կ'Վ. չէ ուղած մէջ բերելով զմեզ լուսաւորել: Սակայն թող ներուի մեզ, և ստիպուած ենք ըսել, թէ դուք է՛. մինչև ԺԱ. դար մեր եկեղեցական պատ-

մութիւնը խիստ հարեանցի կերպով ուսումնասիրած էք. այսպէս նաև Յովհ. Օննեցի կաթողիկոս վերանորոգութեան ոգին չէք ըմբռնած: Այն Մանիքէապաղիկեան և Երևութական հայ աղանդաւորները, որոց աղանդի աղբիւրները միայն քննած էք ձեր երեք տարի յառաջ հրատարակած երկարաւուրութեան մէջ, նոքա նոյն իսկ է՛. դարում, ևս առաւել Օննեցւոյ նախորդ կաթողիկոսին օրերը, և հազին ոյժ ստացած լինելով Հայաստանի մէջ, այնպիսի կրօնական և բարոյական աղէտներ յառաջ բերին մեր ազգին մէջ, զոր կարելի չէ սուղ բանիւ նկարագրել: Այո՛, նոքա լրբարար և բռնութեամբ նորոգեցին մեր ժողովրդեան մէջ Երևութականաց, Եւտիքէսի, Նեստորի, Պաղիկեանց և Մանիքեցւոց աղանդները, և թիւ չարիքներով լցին մեր երկիրը, ունելով իրենց զուխ Մայրազունեցիներ, Սարգիսներ և այլն: Աստեղ գէմ է, որ ժողով գումարեց Օննեցին. ասոնց գործած աղէտներն և աւերածները վերականգնելու համար է, որ ի գործ ածեց իւր գրիչն և վարչական հանճարը, և ոչ եթէ Յունաց կամ Քաղկեդոնականաց դէմ, ինչպէս դուք մտացածին բանիւք ապացուցանել կը ջանալ, որոց մասին ոչ մի կանոն, ոչ մի խօսք չկայ: Կարդացէք, — բայց առանց նախապաշարման, — իմաստասէր կաթողիկոսի ժամանակ գումարուած ժողովի կանոնները. կարգացէք մեր պատմութեան վաւերական յիշատակարանները. կարդացէք Օննեցւոյ հարազատ գրութիւնները. միով բանիւ, կարգացէք 1893ին Վենետիկում հրատարակուած Ռառումանիդոսիան Մանիքեապաղիկեան թոնոտրակեցւոց աղանդի գրութիւնն, և յայտն իսկ պիտի տեսնէք ձեր պատրանքը:

Մենք բնաւ չենք ընդունիր դարձեալ, ձեր ըսածը, և կարող ենք ապացուցանել այն ինչ, որ արդէն ապացուցուած է՝ թէ Հայաստանեայց Հին անուանեալ եկեղեցին ի սկզբանէ բաժնուած չէ եղել ընդհանուր եկեղեցիէն, — գէթ թեմական և դաւանաբանական տեսակէտներով, — Նիկիոյ ժողովում եղած եկեղեցական բարեկարգութեանց համաձայն, թէև չորրորդ դարէն ի վեր են թարկուած գոյով երկու պետութեանց քաղաքական ազդեցութեան և բաժանման: Այդպիսի նուիրապետական անկախութիւն Օրմաւ նեանի և անոր համախօնից ինքնահնար գիւտ է, և ոչ ոք ցայսօր կարաց փաստերով ա-

1. Եթէ այս բանիս կը տարակուսից, կարդացէք Թովմա զորի մէջ Վրթանէս քերթողի եղովն առ Սորմէն Ստրառելատ գրուած թուղթը, ուր ի մէջ այլոց շնորհալից բանից՝ գրուած են և նետեալքը. «Զի զոր մեր պատմական Հայքն և նոքեկի վարդապետացն ընդ սղլլա-գառ հովիտն և ընդ Բարեխոսն ի Դոմոլ Ղիմախբոն (սպանոցն Փլաքիմոսի) և ՂՏԻՐԻՅԵԱ Աղեքսանդրացի (Կուղ) անշինջ նդովից վնասել տանեց արժանիք»:

2 Տես Ալեքսանդր և իւր Բաւոթարեան Բաւոթար, ուղ. ի Վենետիկ. 1890, էր. 186-203:

պացուցանել զայն: իսկ եթէ բաժանուած ևս լինել վարչական տեսակէտով, ինչպէս դուք կ'ենթադրէք, սակայն ևս այնպէս հաւատոյ մասանց մէջ պէտք չէր բաժնուիլ, եթէ ստուգիւ խոտորած չէր անոր մի մասը Լուսաւորայք և անոր յաջորդաց բռնած ուղղութենէն: իսկ եթէ բաժանուեցաւ հոսկ ուրեմն է՝ դարու սկիզբները, ինչպէս կը վերկայէ Սողոմոն Մաքենոցի փանակայրը առ Մովսիսի Կաղ. և առ Սո. Սիւնեցւոյ, և անկախ նուիրապետութիւն կազմեց, այդու դուք իսկ կը հաստատէք, թէ որեւի՞ն կայ եղիւր Հայաստանեայց եկեղեցւոյ հնին և նորի բաժանումն, և Միսիթարեաններն այդ պատմական եղելութեան հաստատուն գիտակցութեամբ է, որ կը պնդեն զայն, և ոչ թէ կաթողիկէական գգացմամբ և եթ:

* *

Անցնինք վերջին կետին, որ կը կազմէ ձեր և մեր մէջ եղած խնդրոյն հիմնաքարը: Դուք հաստատ համոզուած էք, թէ մի բրնոքիւն դաւանելով ի Քրիստոս՝ Կիւրդի վարդապետութեանը կը հետևիք՝ ըստ գաղափարաց և ոչ ըստ բառին: Թէ Կիւրդի վարդապետութիւնը ոչ երկարանկութեան և ոչ միաբանականութեան, այլ մի միայն բնութիւն դաւանելու մէջ կայացած է. թէ այդ բաներն արդէն ապացուցեր է Հառնակ, որուն գրուածէն կաթողիկէայ նշանաւոր վարդապետներէն մին ևս՝ Հ. Դիւլշէն, կուշումներ կ'ընէ իւր դաստիարակութեանց մէջ, և այլն և այլն. բայց չէք ցոյց տար, թէ Կիւրդի Աղեքսանդրացիին մի բնութեան վարդապետութիւնն ինչ բառով է բացատրած, այսինքն է, սնո՞ստաց, թէ փո՞ստով, որոնք իրարմէ շատ կը տարբերին նշանակութեամբ ինչպէս պիտի ցուցնենք: Դուք բնաւ ի նշկատի առած չէք, թէ Կիւրդի ժմ դէմ, ինչ պարագայի մէջ, և ինչպիսի մոլորութիւն մի ընդոտնելու և ինչ հշմարտութիւն հաստատելու համար գործածեր է զայն, և թէ յետ այնորիկ ինչ գէշեր և ինչ կերպով Հարկ էր գործածել եւտիքան մուրթութեան դէմ, Դուք ինչպէս Քաղկեդոնի ժողովոյն՝ այսպէս ալ Կիւրդի վարդապետութեան խորը չէք մտած բնաւ: Մի բնոքիւն Բաբին մարմնացելոյ, միայն ուսած էք թոթովել: Դուք ձեր այնքան հիացմամբ յիշած միակ Հառնակէն մի միայն ապացոյց անգամ մէջ բերած չէք, դարձեալ, որպէս զի իմանային ընթերցողք, թէ գերմանացի Հայրաբոսն ինչպէս մեկնաբանած է յոյն վարդապետի միտքը, և դուք ինչքան համաձայն կամ

հակառակ կ'ընթանայք անոր: Վերկայէս՝ Հ. Դիւլշէն կարող էր բողոքական գիտնականէն շատ ուրիշ կոչումներ ընել, առանց համաձայնելու Հայոց եկեղեցւոյ դաւանութեան մասին անոր յայտնած կարծիքին: Ուստի ի՞նչ նշանակութիւն ունին այս և այս պիտի կցկտուր ասութիւններ. մենք ձեզմէ հաստատուն և իրական փաստեր կը պահանջենք և ոչ թէ այլ ու ձախ աստիճանութիւններ, որոնք որքան շատ են, այնքան ևս իրարու հակասող: Վերկայէս ի՞նչ նշանակութիւն ունի բոլոր սղոյափառ եկեղեցիները մէկդի թողուլ և մի միայն Կիւրդի վերադասել, որ Քաղկեդոնի ժողովէն յառաջ ապրեցաւ և գրեց:

— Կ. Վ. « Այս դրութիւնը, որը արտայայտելու համար Կիւրդի գործ է ածել՝ Մի բնոքիւն Բաբին մարմնացելոյ, կամ մի բրնոքիւն յերկոց բանաձևները՝ յենուում է այն գաղափարի վերայ, թէ մարդեղութիւնն ից յետոյ Քրիստոսի մէջ ոչ մի բաժանում գտնել չէ կարելի. քրիստոնէական հաստատ պահելովում է աստուածային և մարդկայինը այնպէս սերտ կերպիւ միացած ընդունել, որ ոչ մի մարդկային կիրք կամ գործողութիւն առանց աստուածային մասնակցութեան տեղի ունեցած չլինի և ընդհակառակն. վերկայէս մեր մտքի համար անըմբռնելի է առանձին բնութիւններ, առանց անձնաւորեալ կերպաւորութեան, կամ մի անձն՝ որ երկու ներգործութիւն և երկու կամք ունի. ուստի բնութիւնների բաժանումը սկսմայ դէպ ի անձերի բաժանումն պէտք է տանէ »:

— Ներեցէք ինձ ըսել, արժանապատիւ Հայր, թէ դուք այդ մէջ բերուած կէտեւրու խորութեան հետ պարզութիւնն և լաւ ըմբռնած չէք. ուստի կրնաք երևակայել, թէ « Արարաբար » ընթերցող Տէրտէրներն որչափ հասկցեր և օգտուող են: Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը, կամ լաւ և անձնաւորակ միութիւնը բացատրելու համար՝ սուրբ Հարք աստուածաբանականին հետ՝ ընդունել և ի գործ ածել են նաև փիլիսոփայական այն ընդհանուր սկզբունքները, գործեք Արիստոտէլէն սկսեալ մինչայն ի մաստատելք ի կիր արկեր են սահմանելու բրնոքիւն, անձն և դէմ: Բնութիւնն = սնո՞ստաց = subsistentia, ի հնումն շատ աւելի ընդարձակ նշանակութիւն ունէր, քան անձն և դէմը. այսինքն է՝ կը ստորագրի փաղանուաբար թէ՛ պարզ իմացական և թէ՛ բաղկացու եակաց, թէ՛ անձնաւորին և թէ՛ անձնաւորութենէ զուրկ նիւթազանգ իրաց. իսկ անձն, ընդհակառակն, կը ստորագրուի բացա-

ռութեամբ միայն իմացական և բանական էակաց այն է՝ կայուն կամ ենթակացեալ: Անձն կը կոչենք զգալի արարածոց կարգին մէջ միայն մարդկային անհատներն, և յԵրրորդութեան անդ՝ երեք առանձնաւորութիւնները: Դարձեալ բնութիւնը, — օրինակ իմն մարդկայինը, — մեղք կարող ենք ըմբռնել և ստորոգել միայն, ունելով ի մտի անոր պարզ ծանօթութիւնը ի վերացեալն, թէ և նա թանձրացեալ կերպով տակաւին գոյութիւն չունենայ: Իսկ անձն ոչ երբեք. սա ըմբռնելի և ստորոգելի ըլլալու համար պէտք է, որ իրօք ըլլայ իրրեւ ենթակայ բնութեան: Երկրորդ՝ Յոյնք Ե. դարէնի վեր թէ՛ անձը և թէ՛ անձնաւոր ենթակայութիւնը յաստուածայինս նոժոժացի բառով կը ներկայացնեն, և փոսէ բառով լոկ բնութիւնը ի՛մանան վերացմամբ: Իսկ մեր դասական լեզուի մէջ որովհետեւ անձն միայն հոգւոյ և մտքի իմաստով Քառնուած է. հետեւաբար մեր նախնի Հայր՝ բառս բնութիւն փոխանակ նոժոժացի աւելի է վար արկած են Երրորդութեան և Մարդեղութեան խորհրդոց մէջ՝ և ասոր բազմաթիւ օրինակներ կան¹: Իսկ դէմ == πρὸς-σῶπον կ'ըսուի այն կերպարանքն, որով անձնաւորն կամ անհատն կ'արտայայտուի լրացեալ կամ կատարեալ ի տեսակի: Երրորդ՝ որ և է էակ մի, կամ լաւ և անձնաւոր ենթակայութիւնն կարող է բաղկացած ըլլալ տարբեր գոյացութիւններէ (փոսէ), — ինչպէս օրինակ իմն մարդ, որ բաղկացած է ի շնչաւոր մարմնոյ և ի բանական հոգւոյ, — և ունել ըստ այնմ այլ և այլ ներգործութիւններ: Այս ներգործութիւնք՝ թէպէտեւ առ հասարակ կ'ընծայուին անձին՝ իրրեւ ենթակայի, բայց անոնց իրրեւ սկզբնաղբիւր են կարողութիւններն, ինչպէս և կարողութեանց

ալ բնութիւնը, որով ըստ հանրածանօթ առածին Արիստոտելի կարճ կերպով կ'ըսուի, թէ Operatio sequitur naturæ vel esse: Թէպէտեւ այդ էակի մէջ բոլոր ներգործութեանց վրայ իշխողն և վարողն է ազնուագոյն և գերագոյն կարողութիւնն, բայց այդ կարողութիւնը շեղծանք բնաւ ստորին ներգործութիւններն, այլ ընդհակառակն կը կատարեալագործէ և կ'ազնուացնէ զանոնք՝ իրեն համակերպելով: Այսպէս, օրինակ իմն, ի մարդումս կ'արտագրուին միշտ, — անոր գոյոյն հաւմեմատ, — անբանական և այլ կիրքեր և ներգործութիւններ ևս, որք հասարակ են նաև անբան կենդանեաց, բայց մարդուս մէջ ընդհակառակն աւելի չնախարհիկ կերպով կը կատարուին: Այս ընդհանուր ընդունուած սկզբունքներս դնելէն վերջ՝ դառնալք մեր խնդրոյն, և տեսնելք, թէ՛ Վիրքի և մեր նախնիք ի՛նչ վարդապետած են բնութեանց մասին, և դուք ի՛նչպէս կը կամակործէք զանոնք այսօր:

* *

Արդ՝ Վիրքի գրութիւններն վերստին աչքէ անցնելով, դիտեցինք, որ ամենուրեք երբ կը խօսի Քրիստոսի աստուածային բնութեան վրայ առանձինն, որով է իսկակից Հօր, և առանձինն մարդկային բնութեան վրայ, — իբր բնութեանկից Վուսին, — երբեք նոժոժացի բառը չէ գործածեր, այլ միշտ և հանապազ փոսէ կը գրէ: Այո՛, թէ մի է Քրիստոս իւրաքանչեւ Տրամախոսութեան մէջ հարկուոր անգամներ կը հանդիպինք հետեւեալ ձեւերուն. Εἴπερ ἔστιν ἄγιος κατὰ φύσιν. — κατὰ ἰδίαν φύσιν ὁ Θεός, — αὐτοῦ μὲν γὰρ φύσιν πατήρ... δὲ δὲ φύσιν καὶ ἀληθινὸς υἱὸς γέγονε καθὰ ἡμᾶς, — ὃν ἀνθρώπων ὄντα՝ κατὰ ἡμᾶς τὴν φύσιν, և այլն: Իսկ երբ կը խօսի Քրիստոսի անձնաւորական միաւորութեան վերայ, միշտ և հանապազ նոժոժացի բառը կը գործածէ, իբրեւ յայտարար աստուածային անձի, փոխանակ ամբողջի: Ով կը տալուսի ըսածներուս վրայ, կը հրաւիրենք այնպիսին կարգալ Ս. Հօրս յիշեալ ճառն և Գ. Գ. և Ը. բորք Նղովդի շատագովութիւնքը առ այլ և այլ եպիսկոպոսուն և առ հերեւսիովտապետն Նեստորիոս զրած նամակները. իսկ ես առ Նեստոր գրած Գ. նամակի մէկ տեղին միայն կը դնեմ հոս՝ յունարէն բնազրով, ըսածաւ ակններեւ ընելու համար:

1. Այսինքն է Աղթանգեղոս, Օննեղոս, Խոսրովկայ, Ա. Սաննեղոս, 2 Ներսէսեանք և Գրիգորեանքու քով. բայց մասնաւորապէս այն տեղերում, յորս է՛րանք թէ բնութիւնն աստուածային մարմնացու, կամ միացու, կամ խառնեցու ընդ մարդկայնոյն: Ուստի այս և նման պարագայից մէջ ուղղակի անձն աստուածային կը կոչուի, սպա թէ ոչ կամ Երրորդութիւնը մարմնացած պիտի կամուրէին մեր նախնիք, և կամ աստուածային վերացեալ բնութիւն՝ առանց անձնաւորութեան. երկուքն ալ չերեւոյնտական են: Ուրիշն անհաւելութիւնն յայտնի է:

« Τούτοις δὲ καὶ ἡμᾶς ἔπεσθαι δεῖ καὶ τοῖς λόγοις καὶ τοῖς δόγμασιν· ἐννοοῦντας, τί τὸ σαρκωθῆναι, καὶ ἐνανθρωπήσαι δηλοῦν τὸν ἐκ Θεοῦ λόγον, οὐ γὰρ φαμέν, ὅτι ἡ τοῦ λόγου φύσις μεταποιηθεῖσα γέγονε σὰρξ. ἀλλ' οὐδὲ, ὅτι εἰς θλον ἀνθρώπων μετεβλήθη, τὸν ἐκψυχῆς καὶ σώματος. ἐκείνο δὲ μᾶλλον, ὅτι κάρκα ἐμψυχωμένην ψυχῇ λογικῇ ἐνώσας ὁ λόγος ἑαυτῷ καθὰ ὑπόστασιν, ἀφράστως τε καὶ ἀπερινοήτως γέγονεν ἀνθρώπος, καὶ κεχρημάτικεν ὅλος ἀνθρώπου, οὐ κατὰ θέλησιν μόνην, ἣ εὐδοκίαν· ἀλλ' οὐδὲ ὡς ἐν προστάτῃ προσώπου μόνου· καὶ ὅτι διάφοροι μὲν αἱ πρὸς ἐνότητα ἀληθινὴν συναχθεῖσαι φύσεις· Εἰς δὲ ἐξ ἀμφοτέρων Χριστὸς καὶ ὁλος. οὐχ ὡς τῆς τῶν φύσεων διαφορᾶς ἀνηρημένης διὰ τὴν ἐνώσιν· ἀποτελεσαῶν δὲ μᾶλλον ἡμῖν τὸν ἕνα κύριον Ἰησοῦν Χριστὸν καὶ ὅλον... ἐπὶ δὲ διὰ ἡμᾶς, καὶ διὰ τὴν ἡμετέραν σωτηρίαν ἐνώσας ἐαυτῷ καθὰ ὑπόστασιν τὸ ἀνθρώπινον προήλθεν ἐκ γυναικὸς, ταύτῃ τοι λέγεται γεννηθῆναι σαρκικῶς ».

Արդ՝ այս վկայութենէս կը տեսնուի, թէ Կիրեոզ մի միայն ձեպստապախս կը ճանչնայ ի Քրիստոս և երկուս փխփխ (φύσις) իրարու հետ անշփոթ և անբաժանելի կերպով միացած. իսկ որովհետեւ բառովս ձեպստապախս Ս. Կիրեոզ համաձայն Ս. Աթանասի և Եղեղիսիանոսի անձնաշարժութեան, կամ ըստ արդի առման լեզուիս՝ անձն, անհատ և երկակայաբան աստուածային կը հասկնայ, և ոչ թէ լոկ փոստիս ի վերացեալին, ուրեմն կարեմք առանց երկրայութեան եզրակացնել, թէ ըստ Կիրեոզի վարդապետութեան իսկ գոն ի Քրիստոս, — թէ՛ ըստ գաղափարաց և թէ՛ բառի ճիշդ նշանակութեամբ, — երկու փոստիս (բնութիւնք) միացեալ անշփոթ և անբաժանելի կերպով Բանին Աստուծոյ անձին հետ։ Եւ որովհետեւ

« Ի սոյն վարդապետութեան և ի վիճաւ այսոց հաւատոյ մասանց մեզ կալ և մնալ արժան է. երկիրաբ մասը ճառելով, եթէ զի՞նչ իյէ մարմնանայ Բանին Աստուծոյ և մարդանայ, Չի ոչ ասեմք բնութեան (փոստիս) Բանին՝ փոխութեամբ իւրով եղեալ մարմին, և ոչ իսկ թէ փոխակերպեցաւ ի մարդն բնութեան կամաց և եթ, ոչ կարծեօք, և ոչ որպէս վերառամբ մարդկային անձին, այլ ըստ իւրումն անձնաշարժութեան (նոստաստիս) անձնաշարժի և անիմանայի կերպիւ մարդ եղև, առեալ զկատարեալն մարմին ճոխացեալ հոգեով բանականաւ, և միանալովն՝ որդի մարդոյ կոչեցաւ. Թէպէտեւ այլ և այլ են թեորհելքք, այլ միանալովն՝ մի միայն եկաց մեզ Քրիստոս և Որդի։ Ոչ եթէ սակո միանալոյն բարձուն տարբերութիւնք բնութեանցն, այլ մանաւանդ թէ ի ձեռն խորհրդական և անձնաշարժ միաւորութեան ի միում անձի՝ զմի միայն Քրիստոս Յիսուս և Որդի մեզ կազմեցին։ Այսպէս ուրեմն, որ էրն յառաջ քան զամենայն յաւիտեանս և ծնեալ ի Հօրէ՛, ըստ մարմնոյ ծնեալ սաի ի կնոջէ... այլ որ վասն մեր և վասն մերոյ փրկութեան ըստ անձնաւորականն (կա՛տն նոստաստիս) միաւորութեան առեալ յինքն զմարդկայինն, մարմնապէս կամեցաւ ծնանել ի կնոջէ »։

մարդկայինն առանձին անձն չի կազմեր Քրիստոսի մէջ, այնու զի աստուածային անձի հետ անբաժանելի կերպով միացած է իրրև ստորին ընդ վերագունին, ինչպէս քո մէջ կենդանականը միացած ըլլալով բանական հոգեւ չէ, մի անձնաւ կազմած է, սակայն և այնպէս իր սահմանուի ըստ բնութեանց (փոստիս) կենդանի-բանաւոր. այսպէս ուրեմն և Քրիստոս՝ իրրև անձն Բանին Աստուծոյ՝ մի է, բայց ըստ երկուց բնութեանց փոստիս, յորոց կազմեալ է, կ'ըսուի Առաջած և մարդ կատարեալ. և այդպէս կ'ըսուի, վասն զի երկու փոստիսները անկորուստ պահուած են նաև յետ միաւորութեանն։

Եթր այս տուած մեկնութեան ի նպատակն զեռն ուրիշ զօրեղ փաստեր ևս։ Ա. Գիտելու ենք, որ Ս. Աթանաս Արիստի մուրումնութիւնք շարժաբեւու համար, թողով վաղնիական բառս նոստաստիս, դիմեց լոստաստիս։ — Պատճառն։ — Վասն զի նոստաստիս աւելի կը նշանակէր անձնաշարժա-

1. S. Cyrilli. Opera omnia, edit. Lutetiae Tom. V. pars II. Epistola 4. p. 25,

քիւն¹, ենթակայութիւնն ի թանձրացեալն, քան թէ Հասարակ իսկութիւնն կամ էութիւնն ի վերացեալն. Հետեալքար ձիպոստասիս բառով յարմար չէր ապացուցանել Սորոյն Աստուծոյ էակցութիւնը կամ Համագոյակից լինելը՝ Հօր Աստուծոյ: Չի նայելով որ Աթանասի և Նիկիոյ Ս. Ժողովոյն Հեղինակութեամբ օժտւած, կամ լաւ ևս ծնօցեցանք բառը Ներկրական դարձած էր եկեղեցական Հարց Համար, առկայն և այնպէս Նեստորի մտորութիւնը տապալելու Համար Ս. Կիրիւզ կը դիմէ դարձեալ նոյն օժտեցութեան, իբրև մի զօրեղ զէնքի: — Պատահուն: — Եստ յայտնի է. որովհետև նոյն ինքն Նեստոր բառս նոյն օժտեցութեան անձնաշարժութեան նշանակութեամբ և կրկնակի կերպով կը գործածէր. այսինքն է միովն՝ աստուծային անձնաւորութիւնը բաժանաբար նշանակելով, իսկ միւսովն՝ մարդկային անձը: Հետեալքար Ս. Կիրիւզ մի միայն ձիպոստասիս գրաւ Աստուծային և մարդկային փոխանցումը՝ (բնութեանց), անձնաշարժական միտքիւնը ապացուցանելու համար, առանց այդ փոխանցումը անհրաժեշտ երկուութիւնը — ինչպէս տեսանք — Ժառանգելու. ապա թէ ոչ Նեստորը պարտած ժամանակ՝ անոր արդիւնները զԵստիւն ապապանած պիտի ըլլար:

Բ. Եթէ պահ մենթադրենք, թէ Կիրիւզ Հիպոստասիս բառով էութիւնն կը հասկնար և ոչ թէ անձնաշարժութիւնն, այն ժամանակ Ապոլինարի Համաձայն վարդապետած պիտի ըլլար, և հայրապետներուն կարգը դաւաճած. վասն զի էութիւնն երբեք առանձնաւորութեանց իսկ Հասարակ է: Եւ իրօք եղան իսկ Կիրիւզի Հակառակորդներէն և նոյն իսկ աստուծաբաններէն ոմանք, որոնք նոյն օժտեցութեան բառը առաջին նշանակութեամբ առնելով, ամբաստանեցին զԿիրիւզ իբրև Համախոհ Ապոլինարի. սակայն Հետագայ տարր Հարց և լատին աստուծաբանք առ Հասարակ

րակ պաշտպանեցին, ըսելով, թէ Կիրիւզ հիպոստասիս բառը միշտ իբր անձն գործածած է. ոչ իբրև էութիւն վերացական, այլ ի թանձրացեալն առած:

Գ. Լատինք առ Հասարակ թէ Ս. Կիրիւզ գործոց թարգմանութեան, և թէ առանձին իրենց գրուածոց մէջ երբեք նոյն օժտեցութեան բառը natura թարգմանած չեն. այլ ընդհակառակն կամ ընդհանրապէս ստուգանդեպութեամբ hypostasia պահէր են, և կամ երբեմն substantia և երբեմն persona թարգմանած: Այս իսկ յայտնի ապացոյց է, թէ ոչ ոք հիպոստասիս բառով իմանացաւ երբեք պարզ բնութիւն կամ էութիւն ի վերացեալն:

Ուստի մեր նախնիք ալ նոյն օժտեցութեան հոմաձայն բառ չունենալով, բնութիւն բառը նոյն մտքով գործածեցին. ուստի անհուսաբեր կը լսել որ յայն և լատին եկեղեցիները երկու բնութիւն, այսինքն է փոխանցումը natura կը դառնան Գիրիւզի մէջ, նոյն օժտեցութեան անձն հասկնալով՝ կը զայն կոչէին, կը զայրանային և զանոնք առհասարակ Նեստորականներու Համախոհ կը համարէին: Եւ յայտնի դարբերում անոնց փայլուն Հանձնարներն անգամ, — ինչպիսիք են Ան. Սանահնեցի և Սարկիսազ վարդապետ, — չկարողացան ըմբռնել Յունաց և Լատինաց միտքը, և զանազան Նեստորականներէն: Չարմանք է, որ լեզուական ստուգաբանութեան զարգանալով Հանդերձ, այսօր սակաւին նոյն կը պնդեն մեր էվմուսնական եղբարքն: Ուստի սոցա պատասխանատուութիւնն ըստ իս աւելի մեծ է, քան նախնեաց տգիտութիւնը: Ժամանակը չէ՞ արդեօք զիրար հակակալու:

— Կ. Վ. Այդ բերած փաստերն բոլորն ևս բանաւոր են, բայց մեր նախնիք էլ այդպէս կը Հակահայրապետէին արդեօք. այս բանիս Համախոհ չեմ տակաւին:

— Եթէ մեր նախնիք այդպէս Հաւատացած և վարդապետած չլինէին, Հաւատացէք, պատուարժան յօդուածագիր, որ ես իսկ մի գրիսեց անգամ գրելու ժամանակս չպիտի լինէի, թող թէ ընդերկար ձեզ Հետ վիճարանելու. վասն զի մեր Համոզումը լոկ մի բառ արտաբերէ ձեռնակութեան, և կամ ճշմարտութեան որչափ կարելի է Հետի փախելու վրայ Հաստատուած չէ, այլ ամբողջ վարդապետութեան ներքին և տրամաբանական արժեքի վրայ, որ միայն կարող է լինել Հիմնաբար գիտութեան:

— Կ. Վ. Բարեւ է. բայց ցոյց ինձ այդ՝ բառական փաստերով...

1. Այս տեղ կը ծանուցանեմ, թէ ինչպէս մեր գաւառական Բաւոյն բառին, այսպէս և յունարէն հիպոստասիս բառին ալ և այլ նշանակութեան համար մեծ մեծ խառնութիւններ և երկպառակութիւններ ելան սրբայն Աթանասի և Հերոնիմոսի ժամանակ, մասնաւորապէս 360ին մօտերը ըստ արեւելեան և արեւմտեան եկեղեցիները վարդապետ, Գր. Նադեմազապետ վարդապետ Համաձայն (Տես ճառ ի Ս. Աթանաս): Վասն զի ոմանք անով պարզ էութիւն և բնութիւն, և ոմանք ալ անձնաւորութիւն կամ անձ իմանալով, մէկ զմէկ փոխադարձ Սարգիստեան և Արիստոսեան կ'անուանէին. վերջապէս սրբալուսեալ սր. Հիպոստասիս տեղի տեղ գործածուի և առի՞ն էութեան:

— Այդ իսկ սիրայօժար կը կատարեմ. միայն թէ ընդունի՛ր և դուք սիրաբեան աւաճաճը, թէ Հաստատացողին համար երկիրս չի և փաստաբ. իսկ չհաստատացողին՝ և ոչ դանգ մի:

— Կ. Վ. Այդ հարկաւոր է տարակոյս. ներք փարատելու համար:

— Բանանք, ուրեմն, նախ Հայաստանեայց եկեղեցում արդէն ի վաղուց պաշտուած Հայրապետաց Եարականը, և դուք կը լսէք Մ. Խորենացու Ազգելից մարտառը. « Բանն քանձրանայ ի ճարմնի. մարմնանայ ամամարմինն միացեալ քնոքեամբ ի յերկոց »: Գիտէ՛ք, անշուշտ, թէ որուն են այդ տոգերն, և առ ո՞վ ուղղուած. այսինքն է՝ Կիրարի Աղեքսանդրացու՞ ի ընդդէմ հեղատիվտապետին Նեստորի, որ պատճառ եղաւ երրորդ տիեզերական ժողովոյն, որուն ի պատիւ նուիրեր է Մովսէս իւր երգի վերջին տունը, նշովելով « զՆեստոր և զադանդն իւր պիղծ »: Ուրեմն դուք կը տեսնէ՛ք, որ այս տեղ իսկ Կիրարի վերոյիշեալ տեղոյն համաձայն, որոշակի կը դաւանուի թանձրածեալ Բանին կամ անձին երկու բնութիւն. ներք բաղկացած գուր « միացեալ բնութեամբ ի յերկոց »: Այս ամենապարզ իմաստին՝ ոմանք բուլբեր գնելով և կէտերու տեղափոխութեամբ, ոմանք ալ կամակար մտղով քրնոքին բառն ըստ արդի նշանակութեան առնելով, ուղեցին եզրակացնել, թէ երկոք քնոքեաներէ մի քնոքին ձեւացած. և կամ միացեալ բնութեամբ ի յերկոց քնոքեանց: Սակայն այսպիսի համարակալան մեկնութիւն. ներք ոչ միայն մեր նախնեաց, այլ նոյն իսկ Ս. Կիրարի լեզուին հետ՝ վարդապետութիւնն ևս կը խանգարեն, որ նշովելն յառաջ առ Նեստոր գրած նամակին մէջ կ'ըսէ. « Քանզի Աստուած ըստ անձնաշարժեան և չափսն օրօսուած, միացաւ ի մարմնի, վասն այնք և կոյսն սուրբ մարմնապէս ծնաւ զնա »: Իսկ Նշովելը մէջ, թէ « Խոստովանիմք, Բանին Աստուծոյ ըստ անձնաշարժեան (չափսն օրօսուած) միացեալ գոյ ի մարմնի »: Բունութեն բնագրի այս երկու տեղեաց մէջ իսկ, ինչպէս նաև վերը մէջ բերուածին, չափսն օրօսուած բացատրութիւնը Թարգմանքն է լատինն *secundum hypostasim*, և ոչ թէ *secundum naturam*. իսկ կանխաւ մէջ բերուած տեղոյն մէջ տարբեր փոփոխութիւն՝ ընդհակառակն *natura* Թարգմանած է: Եւ սուսգիւ, եթէ Կիրարի չափսն օրօսուած բացատրութիւնը մակրայարար՝ իսկապէս, անձնաշարժեան չի հասկնար, այլ քնոքեամբ՝ չափսն օրօսուած, այն ժամանակ Նեստորի բերանը կարկած չպիտի ըլլար, որ կը պնդէր, թէ այն միւս

Թիւնը պարզապէս չնորհօք, կարծեալար և պատահմամբ եղած էր, հետեալար նաև երկու բնութիւնն օրօսուած կամ անձն կը դնէր ի Քրիստոս: Ուրեմն Եարականէն մէջ բերուած տեղոյն հայ. քնոքեանն՝ յուն. հիպոստասին է, իսկ « ի յերկոց » ն՝ Կիրարի Գ. թղթին մէջ իշխուած փոփոխութիւններն): Սակայն թողլով մեր՝ դասական լեզուն թուրքով (և զգալիաբար դեռ արհամարհող) համարակներն իրենց ծիծաղական դրոյց մէջ, խօսեցնել տանք մեր լեզուի գերազանց վարկաւորը, Հայոց ուղղափառութեան բերանն Ն. Շնորհալի հայրապետը, աշխարհի բարբառով, որպէս զի ամենուն հասկնալի ըլլայ. « Ենք որ (կը գրէ՝ առ Ալեքսիս՝ փեսայ Կիւս Մանուէլ կայսեր) մի բնութիւն կ'ըսենք՝ կ'իմանանք մի անձնաշարժեան (հիպոստաս) »: Գոր դուք կ'ըսէք, թէ ուղիղ է, և մենք իսկ այնպէս կը խոստովանինք. և գիտնաք որ մեր մի բնութիւն ըսելն ալ ամենեւին այդ բանիդ հետ նոյն է. քաւ լիցի որ հերձուած ծաղկան կարծեաց համար ըսենք: Այս անկէջ յայտնի է, որ երբ նոյն նիւթին վրայ բան մի կը խօսինք՝ նոյն բառը (այսինքն է մի բնութիւն) բաւական չենք համարիր, այլ՝ գերկոց յատկաբանը կը ցուցանենք »:

Այս այսպէս ըսելին վերջ, երբում կ'ընէ բարեխիղի Շնորհալի, թէ մեր բոլոր ազգը ի սկզբանէ հետէ այդպէս կը դաւանի: Շնորհալիին երկու գար վերջ, այն է ԺԳ. դաւանութիւնը՝ Միեւթար Կաթողիկոսի օրով գումարուած ժողովի Հայոց Հայրերն և վարդապետը իսկ՝ իրենց Հաւով գրած լատագրական թղթին՝ մէջ նոյնպէս կ'ըսեն, թէ « Երբ լեզուին մէջ քնոքեան բառն՝ հոմանուն է. և երբեմն անձնաշարժեան կը նշանակէ »: Այս այսպէս ըսելն վերջ՝ խափա վկայ կը կոչեն նաև զՇնորհալիին:

Խոսքովիկ Թարգմանիչ, որ է. դարուն վերջերը փայտեցաւ Յովհ. Օձնեցույ հաւասար հանձնարով, և գրեց Երեւութականաց, Սեւերիանոսաց և Յուլիանիտներու կամ Յակոբիկեանց գէմ, իւր առաջին ճառին մէջ՝ որուն խորագիրն է. Սա այնուսի՞, որ ասեն քնոքեամբ անձնաւոր անկիզբն ընկալեալ զմարդ-

1. Այս թղթն ապուած է ի Կոստանդնուպոլիս յամի Տեսուն 1721. տես եր. 49, 80 և 81:

2. Որուն լատիններէն միայն Ձեռքեր է, և ապուած է Ժողովոյն գործերուն մէջ, Երասարակութեամբ Մանգիւ, Հոմ, ԻԲ. եր. 1214. իսկ նշովելն անպատասջած է:

3. Երեւութականները կը թուի անկախել, ինչպէս գրուածքն իսկ կը տեսնուի:

կոռքիս Աստուածն Քան ի կոռքի, իսկզբան
հետեւեալ դիտողութիւնները կ'ընէ հասարա-
կական և առանձնական բնութեանց վրայ,
որոնք քննարկելու և քննարկելու համար
են, կ'ըսէ. «Սուրբ Հարցն եթէ դեմ — Ծ-
նծո՞տա՞ս կամ քննարկելու յիշէին ի Քրիստոս,
զայն յիշէին որ հասարակականն — քննար-
կելու և քննարկելու համար — քննարկելու
էր առանձնացեալ. եթէ բնութեան յիշէին ի
վերայ նորա՝ յիշէին զայն որ հասարակականն
բոլորապէս յիշէին բերելու բնութիւն. մա-
նաւանդ զի և չէ իսկ հնար զհասարակա-
կանն գտանելու ումը ուրեք, եթէ ոչ առանձ-
նականութիւն. զի բնութեան հաւաքումն ի հա-
սարակին՝ ըստ զարուծութեան եթէ չէ, ա-
նուանող միայն նշանակեալ. իսկ յառանձնա-
կանութիւն՝ ոչ ըստ զարուծութեան, այլ ըստ ներ-
գործութեան և արդեամբք երևեալ. վասն
որոյ և առաջին և իսկագոյն, և մանաւանդ
զսա առանձնեցին գոյացութիւն վեհագոյնըն,
և յորոշ մեքն ընկալան զբանականութեան
վարժողութիւն... և այս է ոմնն, որ և սոյն
սա առանձնի և դեմ և անձն և երեսը, և որ
այլ ինչ նմանութեան»։ Ապա կը գրէ. «Սու-
րբին այսու աւրինակաւ և ի վերայ տնայն-
ութեան փրկչին գտանին իմաստասիրեալ
սուրբ Հարցն, ասելով ոմն (Կիրիլ) ի նո-
ցանէ. Ի միաւորութիւն եկին բնութիւնըն, և
առանց խառնակութեանց եկաց մնաց միա-
ւորութիւնն։ Չնայն ինչն զկանն Աստուած
առ իւրն մարմին ասացին և միաւորեալ և
անշփոթ մնացեալ, որպէս ինչ ոմնաց թուե-
ցաւ սոսի, զմինն՝ դիմին տալով, և զմիւսն՝
բնութեան, այլ միաւորութիւն անշփոթաբար
ասացին զոչ զկանն Աստուած՝ առ իւրն մար-
մին, զոր ի կուսէն և նմին ինքեան Աս-
տուածն Քանի և իւրումն մարմնոյ. որպէս
բնութիւնն ընտանեանայ հասարակական, ըստ
նմին և յատկական դէմն, և նոյն ինքն թու-
յոքն իմանի իմացեալ և անշփոթ մնացեալ։
Եւ զի Միաշնորհայն (այսինքն և Քրիստոս)
մի է, և ոչ երկու, մին միաւորեցելումն
ոչ զանգիտելին Հարցն մի անուանելու դեմ և
մի բնութիւն, թայց էր երբեք ուրեք որ և
կրկին, կամ թէ է երկու գնոյն դասակարգելու
բնութիւնն։ Ոչ եթէ յորժամ կրկին ասեին
զմիաւորութեան եղծակեմ ինչ ի նմա զերա-
շային խորհրդարգ. և ոչ յորժամ մի ըստ միա-
ւորութեան ասեին՝ զգոյացութեան (քննար-
կելու) պակասեցնանք զկատարելութիւն»։

Արդ՝ երկու բնութիւն ի միում անձնաւո-
րութեան, անբաժանելի և անբաժանելի, կը դա-
նանեն նաև Գր. Տղայ, Ն. Լամբրոսովսի,
Յովհ. Օձնեցի և ամենայն Հարց և վարդա-
պետք Հայոց, և ոչ եթէ մի քանի «գայր ի
գայթ զնացողներ»։ Եւստի, ինչպէս միջնա-

գարեան՝ այսպէս և այսօրուայ բոլոր տարա-
ձանութիւններն և կուրիներն բառական խա-
ղի, այսինքն է բնութեան բառի թիւր առման
արդիւնք են, և ոչ այլ ինչ. որ սակայն չբա-
ցատուելով՝ տգէտ ժողովրդեան մէջ թանձր
մոլորութիւններ ծնել է։ Այս մարդ նաև
Միթարեանը Հասկեցի երբ մեր նախնեաց մի
և բնութիւնն բանին մարմնացելոյ, և միացեալ
բնութեանք ի յերկոց բացատրութիւններն, և
երկուցացող դիմաց զանոնք արդարացուցած
ենք։ Ուստի եթէ ստոյգ է Քարամեանի ամ-
բող և ձեր ալ կէս ի կէս զրպարտութիւնը,
այսինքն Միթարեանները Միարարներու
շարժող անուանելն, այս ուղղափառ դաւա-
նութեան մէջ և եթէ է. Եւ մի թէ լաւագոյն
չէ՞ մեր բարեւեղ նախնեաց հետ Քրիստոսի
հօտին համար միարար լինել, քան թէ Քա-
րամեաններու պէս բաժանարար։

— Կ. Վ. «Յովհան Օձնեցի՛ն ևս երկու
բնութիւն դաւանել է. դա ինքնախարաւ-
թիւն է. և այսպիսի ինքնախարութեան մէջ
Միթարեան Հայրերը Չամչեանից սկսած՝
սովոր են իբրև զլիաւոր ապացոյց իրենց
պաշտպանած դրութեան՝ Յովհ. Օձնեցու
օրինակը և յատկապէս նորա ընդդէմ Երեւո-
թականաց ճառը մէջ բերել... մենք կանգ
կ'առնենք այս տեղ միայն այդ ճառի վերայ
և նորա դիմաց դնելով իմաստասիրի միւս
մեր այժմ հրատարակած ճառը, կը հրա-
ւիրենք դիտել. թէ նոցա հեղինակը մի՞ չը-
նոքիսն է ուսուցել, թէ երկու բնութիւն»։

— Դրեք, տեսնենք. բայց միայն կը յանձ-
նենք, որ ձեզ հետ՝ մեր ընկերացողներն ևս
չօչափելի փաստերով ցոյց տուած մի բնու-
թիւն բացատրութեան՝ յուն. Ծնծո՞տա՞ս ան-
ձնաշնորհքն բառին իբրև հոմանիշ գործա-
ծուած ըլլալն երբեք չի մոռանան։

«Արդ, յայտ է թէ անհասանելի միաւո-
րութեանց, և ոչ բնութեանց այլալուծութիւն
ստալիներդ են մեզ զմի ասել բնութիւն մարմ-
նացեալ Քանին։ Չի որ ի Հօրէ անմարմին
Քանն էր՝ ի Մարիամայ սրբայ Կուսն,
այսինքն ի մարդկային բնութեանն՝ մարմին
զգեցեալ և գնոյն միաւորեալ ընդ իւրումն
դիմի և բնութեան՝ մի դէմ, և մի բնութիւն
ասի և հանդերձ մարմնով... Ոչ ի միութեան
գերկազմելիքոցն ոչառնաւ զկատարելութիւն,
և ոչ յաղազ երկազանչիւրոցն զմին հրա-
ժարմ ասել կատարելութիւն. միութիւն՝ յան-
այլալուծեան, և անայլալուծիւն՝ ի միու-
թեան խոստովանելով... Եթէ այսպէս ա-
սեմք՝ ասեն, երկուս լինիմք ասացեալ դէմս

և երկուս բնութիւնս: Դարձեալ փախչելով ի սնտի երկիւղէ, ի սեծագայնն անկանիս չար: Եթէ յերկոց ըստ բնութեան ոչ կամիս ասել զմին, կարի յոյժ չարաչար ըստ բնութեան զմին գտանիս ասացեալ բնութիւն: Այլ անմարմին բնութիւն ստուածային Բանին՝ զմարմնական բնութիւնն ի կուսէն ընկալեալ՝ ընդ ինքեան միաւորեաց. որ. ե ըստ բնութեան՝ յերկոց, աստուածային և մարդկային, իսկ ըստ միաւորութեան՝ մի: Մի՞ զմին ասելով՝ զբնութեան կամակոշտեցոյ զաղբիւրս. և մի՞ յասելոյ անտի զերկախութեան՝ պատանել կամելով զմիաւորութիւնն: Զի երե այս երկոց զեղեցկազոյն հաստոյ յոտիչ աս ճշմարտութիւնն ի վեր կանգնեալ ոչ հաստատիս, աս որ և յեկեղոց աս մին ի նոցանէ՝ կաղ գտանիս. աս խոստովանութիւնն ճշմարտութեան »:

— Կ. Վ. « Դաւանանքների պատմութեան հետ փոքր ի շատէ մօտիկ ծանօթութիւն ունեցող մէկը խիստ պէտք է զարմանար՝ իմանալով, թէ այս և նման տողերի մէջ Քաղկեդոնական երկարեան վարդապետութիւնն զբաւնողներ կան »

— Սակայն աւելի ճիշդ կը լինի բնէ օր, եթէ Կ. վարդապետն մեր նախնեաց գէթ զասական լեզուն լաւ հասկնալու վիճակի մէջ ըլլար, պիտի շատեցնէր հրապարակաւ հակառակը պնդելուն: Օձնեցոյ այդ տողերուն մէջ ոչ միայն Միխիլաքեաններն, այլ և այն ամէնքը, որոնք միայն մի բնութիւնն բացատրութեան վրայ նիւթապէս բնագոյնած լինէ, անտարակոյս պիտի գտնեն Քաղկեդոնի ժողովոյ վարդապետութեան հրքիճ հաւասար երկու բնութիւններ՝ ի միում միաւորութեան կամ՝ յանձնաւորութեան Բանին Աստուծոյ:

Մենք ալ, զուգ ալ, բողոքականք ալ և բոլոր քրիստոնէայք առ հասարակ գիտեն, որ Քաղկեդոնականք թէ՛ նպոյելով զնեստոր և՛ զԵւտիմէս, և թէ՛ պաշտելով օր ըստ օրէ հաւատայ հանգանակը, որոշ կերպով կը դաւաւնին ի մարդեղութեան « զմի միայն Տէր Յիսուս Քրիստոս », մի անձն ստուածային և մի դէմ՝ համաձայն Օձնեցոյն, և թէ սուրբայս ասելը « մի բնութիւն մարմնացեալ բան չէ » ուրիշ բան չէ՝ բայց եթէ մի Քրիստոս, կամ՝ ըստ Գիորնեսիոսի Աստուածաւարդ, այսինքն է Աստուած և մարդ կառուրեալ. մի իսկապէս, անձնաւորապէս, անբաժանելի և անլիքութաբար միացեալ յերկուս: Բայց, զու, ասա ինձ, էյմիածնական ո՞ր վարդապետն ըրած է և կը համարձակի ընել այսօր Օձնեցոյ հետ նաև երկոց բնութեանց դաւանութիւնը, նոյն իսկ ըստ բնութեան. կամ

լաւ ևս, որ վարդապետը կամակոշտ չէ զաղբիւրս բնութեանցն, զմին միայն շարունակ ի դէպս և յանդէպս, յեղյեղելով բնութիւն, զորս Օձնեցին խստիւ կը զգուցանէ: Դարձեալ, որուն, ձայն է այս, Քաղկեդնայ թէ էյմիածնականի, հնոն թէ՛ նոր եկեղեցւոյ: « Եթէ այդպէս ասեմք՝ երկուս լինիմք ասացեալ դէմս և երկուս բնութիւնս », որուն համար կը գոչէ Օձնեցի. « Փախչելով ի սնտի երկիւղէ՝ ի սեծագայնն անկանիս չար » . այսինքն է՝ « ըստ բնութեան զմին գտանիս ասացեալ բնութիւն », որ և եւտիմականին է հաւատար, և կամ՝ երկուսական վարդապետութեան: Որուն համար ըստած են այս խոսքերս. « Որ է ըստ բնութեան՝ յերկուց », և կամ Լեոնի և Քաղկեդոնականաց դաւանութիւնն ասկէց ինչ տարբերութիւն ունի: — Կ. Վ. Զգիտեմ. — Որեմն չգիտցածդ իբրև ստոյգ գիտութիւն ուրիշ ծանօթն իսկ խոյճ դէմ է. Բայց մտիկ ըրէ. որ յարաբերականը՝ կը յարաբերէ մեզ զմիաւորող Քրիստոս, որ ըստ բնութեան — κατὰ ὑπόστασιν, այսինքն է իսկապէս, անձնաւորապէս միացեալ է յերկուց, այն է՝ աստուածային և մարդկային բնութեանց (φύσεις): Պէտք է գիտնալ, որ Օձնեցոյ « ըստ բնութեան յերկուց » ասութիւնը նոյն է Հայրապ. Շար. « բնութեամբ ի յերկուց » բացատրութեան հետ. ուրեմն ասոր իմաստն ևս անոր իմաստին ևս և նման ըլլալու է: Որուն գիտուն կը տեղան Օձնեցոյ հետեւեալ բանից ահաւոր շանթիքն. « Զի եթէ այս երկուք (այսինքն է՝ մի անձնաւորական միաւորութեան և երկուց բնութեանց) ստիճաւ առ ճշմարտութիւնն ի վեր կանգնեալ ոչ հաստատիս, աս որ և յեկեղոց աս մին ի նոցանէ՝ կաղ գտանիս առ խոստովանութիւնն ճշմարտութեան » . Քաղկեդոնականաց արդեօք, որոնք միշտ դաւանած են ի մի անձն, ի մի Քրիստոս՝ երկուս բնութիւնս (φύσεις), թէ ձեր գիտուն, որ միշտ փախուստ կու տայք երկուս բնութիւնն բնէ, և տգիտաբար և անիրաւ կերպով կը կամակործէ « Այրարատի » 169 իրում Օձնեցոյ խօսքը, իբր թէ, « նա մեծագոյն չարիք էր համարում անշուշտ երկուս բնութիւնն ասելն », մինչդեռ Օձնեցին « զմին գտանիս ասացեալ բնութիւնը » իսկապէս չարիք կը համարի: Արդ՝ այս մաթեմատիկական մին ևս եթէ երկուս կը հասկընաս, զարմանք չէ, որ Օձնեցին ալ միաբնակ ընես: Ուրեմն այսպիսի և այսքան յաւակնութեան զիմաց ինչպէս չկարեկցինք և չի գոչենք. O Sancta simplicitas! o miseria bilis cecitas!

* *

— Կ. Վ. Ուրեմն, — Ուրեմն մենք այն-
քան վստահ ենք Յովհ. Օձնեցւոյ երկու բը-
նութիւն ի Քրիստոս ընդունելուն, որքան
զտեղ օրոտայ լուսոյն, ուրեմն ցնորական է «Ա-
բարատի» 162 խումբ արտայայտած այն կար-
ծիքն, իբր թէ Օձնեցին եղած ըլլայ դրական-
նապէս ձեր դաւանած մի բնութիւն վարդա-
պետութեան վերանորոգողն, մինչդեռ նա իւր
ճառին մէջ մեր սուրբ Թարգմանիչներու վար-
դապետութիւնն և կարգերը կ'ուզէ վերաճա-
տատել: Ապացոյց. վասն զի զանոնք կը կոչէ
ի վկայութիւն, և ոչ թէ Աշտարակեցիին կամ
Վրդանէս քերթողները: Կարող էինք մի
բաւական գումար ևս յատկացնել այս դա-
տիս քննութեան, յանձնաժողովի մի ձեռ-
քով: — Բայց ոչ այնպիսի մի յանձնաժողովի,
որ կաթողիկեայ եկեղեցւոյ զէմ գրուած մո-
լեզին Հայհայութիւններն և Էմիւսանին շը-
ռայլած շողագործական գրուածքը միայն
գիտէ: Գնահատել, — այլ բանիբուն և անաշտ
յանձնաժողովի մի: Բայց առ այժմ կը կոչուի
իբրև դատաւոր Հայաստանեայց Հին եկե-
ղեցւոյ բերան երկու լուսամիտ վարդապետ-
ները, տեսնելու համար, թէ նոքա արդէն դա-
րեր յառաջ ինչպէս հասկացեր և մեկներ են
Յովհ. Օձնեցւոյ յիշեալ տեղերը:

Գրիգոր կաթ. մակաբանական Տղայ, առ
Տուտեորդին գրած պատասխանական թղթին 1
մէջ, յիշեցնելով իւր Հակաապոկրիֆին յայն-
ժամու եկեղեցականաց ոմանց մոլորութիւնը,
որոնք և Դենարքոսի այն թիւր կարծեաց
վերայ Հաստատուած, թէ անձն անգոյ է,
կ'ըսէ. « Չանան կարկատել ոչ բնութեամբ
միանալ Բանին Աստուծոյ ընդ մարմնոյն,
այլ անձնաւորութեամբ, և վկայ զԱրիս-
տոտել ունելով, զի թերևս այսու կարաւ-
ցեն ի մի բնութեան բան ածել զնա հար-
կաւորաբար. որպէս և զու այժմ ընտան զԳ-
րիգորիս ուրանալ և կորուսանել ընտրին,
և նոքա զաստուածութեան. որովք, կարծեմ,
թէ և երկրեանքդ սխալեք ի ձրմարտութեան
պղծոտայ: առ որ յանդիմանէ զքեզ երկա-
նիկ և սուրբ վարդապետն Յովհաննէս Ի-
մաստատէր և ուղղատես, ասէ. Փախչիս ի
բնութեանդ անուանէ, ընդ նմին և յերկուցդ
ասելոյ, և ոչ գիտես եթէ մարմին ասելով՝

յերկուսին ի ներքս ըմբռնիս, յորոց փախչիսդ:
Արդ, զնոյն որովք բարեպաշտելոյ կարծես,
Հակատակ ընդդէմ քեզ եղից. Չմարմինն՝
մարմին Բանին ասելով, և զԲանն ասացեալ
մարմին ունել, զԲնչ այլ թուիցիս ասել՝ եթէ
ոչ կրկին: Եւ դարձեալ զԲանն ի Հօրէ ա-
սելով՝ զՀօրն ասցեն նմա զբնութիւն. իսկ
զմարմինն ի մարդկանէ ասելով, զորք ունել
ասես նմա բնութիւն, եթէ ոչ մարդկանն
Բայց կարծեմ, թէ կամիս և ոչ մարմին Քրիս-
տոսի ասել. զի թէ զմարմինն ձրմարտու-
թեամբ խոստովանելիութիւն Քրիստոսի. և զայն
ի մարդկանէ և մարդկային, զնոյն և բնու-
թիւն մարդկային ոչ արդեօք խղճէիր ասել-
քանզի նոյն է մարդկային մարմին ունել Քրիս-
տոսի, և բնութիւն մարդկային. և զի Քրիս-
տոս ասանց միաշարժութեան ոչ առի Քրիստոս
Յիսուս, այլ Աստուած Բան, որպէս և սուրբն
Բասիլիոս ասէ. Չի թէ ասիցէ զմարմինն
բնութիւն Բանին, և զԲանն բնութիւն մար-
մնայն, ամբարշտութեամբ չի են ասացեալքն:
Իսկ եթէ զմի և զնոյն Քրիստոս յերկուց
խոստովանեցիս ասել բնութեանց, այսինքն
աստուածային և մարդկային, ընդէր արդեօք
զարհուրիս, և զայրանաս, և այլանդակ և
Հայհայի շարագրութեամբ զբարեպաշտաց
պղտորես զսեղիս: »

Կը տեսնէք, որ այս տեղիս իսկապէս Յովհ.
Օձնեցւոյն է, և Գրիգոր անոր կողմէն կը
արամարանէ: — Կ. Վ. Այո՛, — Կը գտնէք
այս տեղ, զէթ մի անգամ, մի բնութիւն
բացատրութիւնը: — Կ. Վ. Ոչ: — Կ'ըն-
դունէք, որ Գրիգոր կաթողիկոսի խօսքը
« մարդեղութիւնից յառաջ և առանձինն գո-
յութիւն ունեցող » բնութեանց վրայ չէ, այլ
Քրիստոսի մէջ միացեալ բնութեանց վրայ.
և թէ այդ կրկին կամ երկու բնութիւններն
ևս՝ որոշ և բացայայտ կերպով կը դաւանի նա,
և մանաւանդ այնպէս չի դաւանողները ճշը-
մարտութեան շաւղէն Հեռացած կը համարի:
Կ. Վ. Կ'ընդունիմ. բայց... — Կը լսես
անոր վճռական ձայնը, որ կը գոչէ մեծին
Բարադի Հետ. « Թէ ասիցէ զմարմինն՝
բնութիւն Բանին, և զԲանն՝ բնութիւն մար-
մնայն, ամբարշտութեամբ չի են ասացեալքն: »
— Կ. Վ. Այո՛: — Ուրեմն, ինչպէս կարեմ
մի բնութիւն և Բանին պնդել, Հակառակ Բար-
սեղի և Գրիգորի, և մնալ անոնց Հաւատա-
րիմ աւանդապաշտ: Ուրեմն, ինչպէս ինքզինքդ
Գր. Տղային Հետևող կոչել կը յաւակնիս:
Կը ճանաչենք զՏուտեորդին իբրև Հարգաւոր
որդի և վարդապետ Էմիւսանական եկե-
ղեցւոյ, որ Գրիգորին Հակառակ մի բնու-
թիւն կը վարդապետէ. կը ճանչնաս Հայոց
այդ անասնձ Դիոսկորոսը: — Կ. Վ. Կը

* *

1. Տես ա. Կաթ. նամակներ, առ. Ի Վէնետիկ
1858 թ. Դ. 32:

ճանաչեմ, այլ և կը յարգեմ. — Կը ճանչնամ և զՔրիզդոր Տշալ, իբրև Հովուպետ և ընդհանուր գլուխ Հայաստանեայց եկեղեցւոյ և հաւատարմի ժողանդ Յովնան Սձնեցւոյ: — Կ. Վ. Ի հարկէ: — Ուրեմն, երբ կը գտնենք նոցա քով տարբեր վարդապետութիւններ և ուղղութիւններ, երբ կը հաստատենք, թէ մէկը Հայաստանեայց հին եկեղեցւոյ ներկայացուցիչ է, իսկ միւսը՝ նորին, ինչո՞ւ կը զարմանայք և զայրանայք: Ուրեմն, ի՞նչ խզնով կամ օտար շարադրութեամբ բանից՝ բարեպաշտ մտքերը կը պղտորէք և դիտուեալն առջև ծծածդ ի՞նչէք ինքզինքնիդ: Սակայն դիտե՛ք ինչ ասլ Վ. Վ., որ Յովն. Սձնեցւոյ վարդապետութիւնը Թոսրովիկ թարգմանչի քով ուրիշ տեսակէտերով, այսինքն է՝ երկու ներդրութիւններ զնեցով ի Քրիստոս, դեռ աւելի պապանծեցուցիչ է, զոր դժբաղտաբար յօդաւածիս երկայնութիւնն չի ներեր ամբողջապէս մէջ բերել: Սա Եւտիքէսի համար ի՞նչ է. «Ի՞նչ փախչիս զօմնդ յասելոյ, և զինչ ասեսդ՝ ոչ իմանաս. բայց մեք և ասուեք իսկ զդոյն և ճշմարտեմք. ոչ զայլ ոք իմանալ զօմնն, այլ զնոյն ինքն Տէր Յիսուս Քրիստոս» յաստատութեանն և ի մարդկութեանն. և այսպէս հաւատամք ի միաւորութեան գտանելով մեզ՝ հանրական անդամաց կարողիկե նկեղեցւոյ»:

Հապա ո՞ր թողունք մեր և ձեր պաշտելի հայրապետը՝ Ն. Ենորհայի, որ բազմիցս և ի մանաւորի առ Մանուէլ կայսր գրած թըղթոց մէջ, որոշ կերպով երկու բնութիւն կը վարդապետէ, և իւր նուիրական երգին մէջ կը գոչէ առ եկեղեցին Հայաստանեայց. «Մենքով բնութեանս մեռաւի, Աստուած անմահ խոստովանի»: Փրօցէք, որ Ն. Լամբրոնացին և իւր անպարտելի փաղանգն ևս զձեզ զէնւնկեց կ'ընեն և կը գատապարտեն, դատապարտելով յանդուգն Տուտէորդիները:

* *

— Կ. Վ. Երկու ներգործութիւններ... Այդ միայն պակաս էր. — Այո, երկու ներգործութիւններ, որոնք երբեք պակաս եղած չեն ի Քրիստոս, իբրև անմիջական հետեանք երկուց կամաց և բնութեանց: Մի՞ծ անտրաւ մաքանութիւն է, դաւանել զՔրիստոս կատարելով Աստուած և կատարելով մարդ, և ուրանալ անոր մէջ մարդկային կամք և ներգործութիւններ, որոց մէջ մեծապէս կայացած է մարդկային բնութեան կատարելութիւնն, և որոնցմով կատարեց Քրիստոս աշխարհիս փրկութեան հաշտատար պատարագը

Հօր Աստուծոյ, ասելով. «Ոչ եկի դիարարից զկամս իմ, այլ զկամս այնորիկ, որ առաքեալն գիտս»: Առանց երկու կամաց ի՞նչպէս պիտի մեկնէք դուք այս և հետեանալ քաջատրութիւնները: Ոչ որպէս ևս կամիմ, այլ որպէս գոռ» (Հայր), որոնք այնքան քաջորոշ կերպով շնչտուած են Աւետարանի և առաքելական թղթոց մէջ: — Կ. Վ. Այդ դժուարին մի առեղծուած է ինձ համար. — Իսկ ինձ համար, ընդհակառակն, ամենապարզ կերպով արտայայտուած ճշմարտութիւն է, մանաւանդ եթէ մտածենք, որ Քրիստոս իւր ևս Աստուած իսն՝ Հօր Աստուծոմէն տարբեր կամք չէր կարող ունենալ: — Կ. Վ. Ուրեմն, — Ուրեմն ասկից կը հետևի, թէ խօսքը ուղղակի մարդկային բնութեան յաւակից այն ներգործութեանց վրայ է, զոր Քրիստոս ունէր իւր մէջ, և կ'ուղղէր միշտ աստուածային կամեցողութեան համաձայն, ինչպէս գործին՝ երաժշտի ձեռքում միայն կու տայ իւր ձայնը, և երաժիշտն է, որ կ'ուղղէ և կ'եղանակաւորէ զայն իւր ուզածին պէս: Սակայն դուք ինչպէս բնութիւն բառի սխալ հասկացողութեամբ՝ կը զրանայք մարդկային բնութեան որոշ դաւանութիւնն ի Քրիստոս, որուն համար Տէրն ինքնին կը գոչէր՝ առ մարդիկ, թէ «Հայր իմ մեծ և քան զիս»։ Երբեք աս կամք բառի սխալ հասկացողութեամբ՝ ի հարկէ պիտի ուրանայք մարդկային կամաց և ներգործութիւններու գոյութիւնը, որ ամենամեծ սեղանակապետութիւն է: — Կ. Վ. Պարզէ ըսելի՞ր: — Դուք կը կարծէք, թէ մարդկային կամք ըսելն ի Քրիստոսն է ընդունել աստուածային կամաց հակառակ ներգործութիւններ, է խափանարար լինել առ տուային կամաց կամ սեղանչել: Ոչ բնու, կաթողիկեայք մարդկային կամաց և ներգործութեանց գոյութիւնը և համաձայնութիւնը միայն կը դաւանին ի Քրիստոս, և ոչ թէ աստուածային կամաց հակառակիլ կամ պառասխիլ. փասն զի ըստ Առաքելոյն՝ Քրիստոս մարմին առնելով՝ ըստ մարմնոյ ամենին եղաւ մեզ նման, բաց ի մեղաց. և ի՞նչպէս կարելի է լինել կատարեալ մարդ, առանց մարդկային կամաց և ներգործութեան:

— Կ. Վ. Անկարելի է ունենալ մարդկային կամք և չհակառակիլ աստուածային կամաց. մենք ձեզինք տեսական սկզբունքներ չենք ուզում, այլ բնական ֆակտեր:

— Բարի է, այդ ֆակտը դուք ձեր մէջ իսկ կը տեսնէք, կը զգայք և կ'իմանայք: — Կ. Վ. Ի՞նչպէս: — Ոչ ապաքէն բաց ի բանական կամքէն՝ դուք ունիք նոյնպէս կենդանական յօժարութիւններ, որոնց համար կ'երգէք Դարականի մէջ. Տուր զօրութիւն հոգոյս

կառնաց՝ հնազանդել զկամս մարմնոյս. և այդ յօժարութիւններն՝ այնպէս ձեր անձին կը վերաբերին, ինչպէս բանական կամքն: Եւ սակայն դուք կարող էք այդ մարմնոյ կամքը յաճախ համակերպել բանական կամաց. և երբ կը պակսիք, պատճառն այն է, որ ձեր մէջ հոգին և մարմին առանձինն առնելով՝ ոչ են գոյութիւնը լրացեալ ի տեսակի: — Կ. Վ. Ուրեմն: — Ուրեմն, եթէ դուք իբրև մի անհատ՝ կրկին ներգործութիւններ ունիք, և այդքան կարող էք առնել, որչափ ևս առաւել Գրիստոս, յորում, — անձնատրական միութեան ձեռքով, — մարդկային կամաց ներգործութիւններն՝ բոլորովին ստորակարգեալ էին աստուածային կամաց և անով զօրացած ու ազնուացած: Երբով մարդկային և աստուածային բնութիւններն իբրև առանձինն կատարեալք ի տեսակի՝ միացած էին ի մի անձն Բանին: Մնացած Ֆակտորը կարող էք գտնել Աւետարանի մէջ, հազար և մի անգամ: Կարող էք գտնել և բոլոր սուրբ Հարց գրուածոց մէջ: Տեղւոյս անձնութեան պատճառաւ ես դարձեալ Խոսքովիկ Թարգմանչէն միայն կ'ըզգեմ՝ մի գեղեցիկ փաստ մէջ բերել: Իսկ ոչ զրէք:

« Սպայէս և վասն կրկին ասելոյն ի Գրիստոս՝ կամ և ներգործութիւն: Եթէ ըստ բնութեանն ոք զայն ստիցէ գոյ, ոչ արտաքոյ ձընարտոքեան գտանի ասացեալ, զի մի ընդ Գայիոսի և Թէոդոսի ամբարշտելով՝ անզգայ, աններգործական և անկրկին զմարմինն տէրութեան, զոր ի Կուսէն առեալ, զօրհարաւ նիցէ: Իսկ թէ ըստ միաւորութեան, և եմին ինքեան միաշորեցելուն ժարհեցի տալ երկուս կամ և երկուս ներգործութիւնս (իրարմէ անկախ)՝ ամենին հեռի ի ճշմարտութենէն և Մաքսիմոսի ի ներքոյ անկեալ սղալանաւքն դուստապարտեցի. քանզի ոչք ապա այնուհետեւ երևեցի վեհագունին յաղբել... Չի ինքն Բանն Աստուած՝ զմարդկայինն իոր ուղղիք զկամս, և ինքեան ազմամբն՝ զմարմնունն իւրոյ շարժիք ներգործութիւն և կիսա. որպէս և երաժշտականն գործի՝ ի յերաժշտապետէ անտի զհնչելն և զնուագելն. և այս է վեհագունին յաղբելն. զի ամենայն, որ ինչ միանգամ և տեսանի ի տէրութեան մարմնին՝ Աստուծոյ Բանին անուանեցի գոյ, և ոչ այլոյ ուրուք. ապա ուրեմն և ներգործելն և կրելն, այլ և կամելն՝ Բանին Աստուծոյ (մարդացելոյ), և ոչ մարդոյ ուրուք ասանձինն տեսեցելոյ ի նմանե ասացելն »:

Աւելորդ չէ ըսել, թէ Խոսքով մի ըսելով, աստուածային կամաց հետ համաձայնութիւնը ցոյց կու տայ մեզ. իսկ երկու՝ ըստ բնութեանց, յորոց կը ներգործին: Ասոր յայտնի նշան է երկիցս կրկնելն՝ « և այս է վեհագունին յաղբելն »: Յիշեալ և եթէ ստորին կամ և ներգործութիւններ չլլային, անկարելի էր վեհագունին, այն է աստուածայինոյն յաղթող լինել, այսինքն է իրեն համաձայնեցել զանոնք: Ուրեմն դուք իսկ, Կ. Վ. Եթէ ստուգիւ հետեւող էք Հայաստանեայց հին եկեղեցւոյ Հայրերուն, ինչո՞ւ կ'ուրանայք Փրիստոսի մէջ մարդկային կամքն և անոր ներգործութիւնները, զորս նոքա կ'ընդունին. իսկ եթէ չէք ուրանար, զէթ յայտարարեցէք, թէ կային, բայց միշտ համաձայն կ'ընթանային աստուածային կամաց. վասն զի այդ նախադասութիւններն իրարմէ շատ տարբեր են: Մինչև երբ Լամբրոնացիէն արտասուածք զրոյով նկարագրուած է ինքնանեայց հին եկեղեցւոյ Հայրերուն, ինչո՞ւ յեղեք, — քրիստոնէական եկեղեցւոյն անհասկընայի լեզուով, — այս և այսպիսի երգեր: Ի՞նչպէս չի զարմանան նաև մանկուք Հայաստանեայց եկեղեցւոյ, երբ կը լսեն այս իրարու հակասող նախադասութիւնները ձեր Փրիստոնէականին մէջ, թէ Յիսուս Փրիստոս է և կատարեալ մարդ, բայց չունի մարդկային բնութիւն. է կատարեալ մարդ, բայց չունի մարդկային կամք և ներգործութիւններ: Իսկ եթէ ունի, ապա ուրեմն, ինչո՞ւ կը հրաժարեցընէք դաւանելէ. ինչո՞ւ անհասկընայի կ'ընէք զայն:

— Կ. Վ. « Ժամանակ է հասկանալ, թէ որ տեղ են մեր գոյութեան արմատները, և որ տեղից մեզ մահացու վտանգ է սպառնում. հասկանալ որ եթէ անձնասպանութիւնը ամենամեծ մեղքն է, ի դէմս ամբողջ ազգի կատարած անձնասպանութիւնը առաքինութիւն համարուել չէ կարող »:

— Մշակին ուղղումը ձեր խօսքերն՝ ի հարկէ մեզ ևս կը վերաբերին, Կ. Վ. ըստ առածին՝ Աղլիի քեզ կ'ըսեմ, հարանուշ դռնս: Սակայն այն բանը, զոր դուք այժմ սկսեք էք հասկանալ, Միութարեաններն արդէն սակցեց մէկ ու կէս դար յառով լաւ ըմբռնած էին. այսինքն թէ մեր գոյութեան արմատներն՝ ընդհանուր եկեղեցւոյ հետ սիրով և միացեալ ապրելուն մէջ կայացած են, ինչպէս. չառաւիրն՝ իւր բունին, և բունն՝ արմատին հետ: Կոյնք կ'աղարկէին է. դաւրուն նաև Մաթուսաղայ, Թէոդ. Քաթենա-

1. Դիսկու և, որ հեղինակս յետ միաւորութեան կը խօսի երկուք բնութեանց և ներգործութեանց մասին, և ոչ թէ ի վերացեալս:

2. Տես Միկն. Խորեղոյ պատարագին, տպ. ի Վեներաբլ 1887:

ւոր, և այլք ուղղախոհք: Իսկ մահացու վտանգն՝ անվատմանէ, ատելութենէ, տգիտութենէ և քաղաքական օտար ազդեցութիւնէ միայն կարէ յառաջ գալ: Այս, կարող է Հայաստանեայց եկեղեցին, իւր յատուկ ծառով և կանոններով ղեկավարուիլ, բայց այդ ընելու համար՝ հարկ կ'սլաք դրեալ, մանաւանդ թէ օրինաւոր է երբեք դրժել իւր անցելոյն, և փոխել և փոփոխել իւր նախնի Թարգմանչաց դաւանանքը:

Հատ երկայն կը լինէր մի առ մի թուել այդ փոփոխութիւններն և ապացուցանել. բայց յամբընթաց ժամանակն և գիտութիւնն՝ դայդ ևս պիտի կատարեն: Իսկ թէ նա կղզիացեալ մնալով՝ ինչ վատարկեցաւ մինչև ցայսօր, և կամ ինչ պիտի վատարկի սակեց վերջ արդիւնքն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ չարժել ղեկակած և ատելութիւն այլոց՝ առ ինքն: Ինչ կը լռեմ այս մասին խօսել, և կը թողում Կ. վարդապետին և համախոհից գիտակցութեան, որ մանր որոճան: Իսկ եթէ այդ վտանգ բաւով՝ քաղաքականը կը հասկցուի, Կ. վ. կարող է ուղղակի իջմիածնականութենէ առ իջմիածնականութիւն բողոքել. վասն զի Մխիթարեաններու երկու դար անդադար սիրով և գիտութեամբ շինածը, նոքա աւերելու պատճառ եղան: Դոյն իսկ այսպիսի ժամանակ, երբ մէկ կողմէն ամբողջական գիւղեր անհովիւ և անպատուար մնացած, — անհոգութեամբ հոգեւոր վարչութեան, — օգնութիւն,

օգնութիւն կը պահատին. իսկ միւս կողմէն գթած և մարդասէր ձեռքեր՝ աւետարանական հոգեով զանոնք կը ժողովեն և կը մխիթարեն, կը լսենք դարձեալ ի մէջ այլոց և՛ «Արարատի» Ապրիլ ամսատետրի 164 իշում, մուեցնեալ ատելութեան ձայնը կաթողիկեայ Եկեղեցւոյ դէմ, այսպէս. «Ուր իշխում է դաւանական բռնակալութիւն»: Այս, նոյն այդ «Արարատն» է, որ 163 իշում մեզ քրիստոնեական եղբայրսիրտքիս և ճշմարտտրքիս քարոզել կը խոտտանայ: Եւ ինչպէս չի զարմանանք և չկարեկցինք այսպիսի քարոզչաց անանկեղծութեան վրայ, երբ այսպիսի անհատատելութեան բացագանչութիւններ անպակաս կը լսուին: Եթէ կան արտաքին ոտնձգութիւններ, այդ չկարէ լինել արդար. վասն զի յունագական եկեղեցիներ՝ ցորչափ իրենք այլ նոյն անջատեալ վիճակի մէջ կը գլուխուին, իրաւունք չունին բնաւ ուրիշէն բռնի միութիւն պահանջել, թող թէ այսպիսի ժամանակի մէջ իրագործել զայն: Եթէ ստուգիւ «Արարատի» նպատակն է սէր և ճշմարտութիւն քարոզել, ուրեմն՝ թող ունին դնէ անկեղծ սիրոյ և ճշմարտութեան ձայնին, և պակէց վերջ ալ միայն սիրով և ճշմարտութեամբ գրէ և գործէ, և կամ լռէ, որով միայն կըրնան յառաջ գալ համերաշխ սէր և բարօրութիւն ցաւագնեալ ազգիս:

Շիրակացի

